

ՎՐԱՑԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՄԱՍԻՆ

Լ. Մ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

Հայկական ՍՍՌ ԳՍ. քղրակից-անդամ

Սայաթ-Նովայի ստեղծագործությունը, որը հասել է մեզ 68-ի շափ հայերեն, 30-ից ավելի վրացերեն, 115-ի շափ ադրբեջաներեն և 2 քառալեզու (հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն և պարսկերեն) խաղերով, անկասկած, բավականին հարուստ նյութ է տրամադրում Անդրկովկասի երեք եղբայրակից ժողովուրդների գրականությունների միասնական պատմության շարադրման համար: Իրոք, այդ գրականություններից և ոչ մեկի, ասել է՝ ո՛չ հայ, ո՛չ վրաց և ո՛չ էլ ադրբեջաներենի լիարժեք ուսումնասիրությունն անկարելի է առանց Սայաթ-Նովայի թողած գրական ժառանգությունը հաշվի առնելու:

Ճիշտ է, երգիչն իր ադրբեջաներեն մի խաղում ընդգծում է, որ «Սայաթ-Նովեն հավատն չի ուրանալ՝ հայ է» (Սայաթ-Նովա դինըսիա ինքար էթմաս՝ էրմանի դուր)¹, որը հետագայում բանահյուսությունը վերամշակել է՝ «Եկեղեցուց չեմ դուռ դալ, չեմ ուրանալ Հիսուսին» (Զըխմանամ քլիսադան, դոնմանամ իսադան)², սակայն միաժամանակ իր մի շարք վրացերեն խաղերում նա անվանում է իրեն վրաց թագավորների դուլ, ճորտ, ծառա և այլն, իհարկե, Վրաստանի հպատակի իմաստով: Զէ՛ որ իր մի ուրիշ ադրբեջաներեն խաղում նույն Սայաթ-Նովան շեշտում է. «Հայրենիքս Թիֆլիզն է, կողմն Վրաստան. մերս Հավլարարցի, հերս Հալաբցի» (Վաթանըմ Թիֆլիզ դուր, սամթի Գուրջիստան, անամ Հավլարարուլ, աթամ Հալաբլու)³:

Եվ սա բնական է, քանի որ Սայաթ-Նովան բազմաթիվ թելերով կապված էր Վրաստանի (Քարթլ-Կախեթի) և, մասնավորապես, նրա մայրաքաղաք Թբիլիսիի հետ, որը նրա ծննդավայրն էր:

Աշխատելով Թբիլիսիում իբրև արհեստավոր (սկզբում՝ աշակերտ, հետո՝ ուստա-վարպետ), միաժամանակ և աշուղ-բանաստեղծ, նույնիսկ պալատական սազանդար նախ Թելավիի (Կախեթի մասնավոր թագավորության) արքունիքում (մինչև 1762 թ.), ապա Թբիլիսիի (միացյալ Քարթլ-Կախեթի թագավորության) արքունիքում (1762—1765 թթ.), Սայաթ-Նովան 1765 թվականից ստիպված է լինում, ավելի ճիշտն ասած՝ հարկադրված է լինում ընտրել նոր ուղի իր գործունեության համար՝ իբրև հայոց եկեղեցու սպասավորի (հոգևո-

1 Գ. Ախվերդյան, Սայաթ-Նովա, Մոսկվա, 1852, էջ ԺԱ և Ժան. 10: Լ. Մելիքսեթ-Բեկ, Սայաթ-Նովա, Թբիլիսի, 1930, էջ 30, 137, 144 (վրացերեն): Մ. Հասրաթյան, Սայաթ-Նովա, Երևան, 1959, էջ 185:

2 Գ. Ախվերդյան, նշվ. աշխ., էջ ԺԲ և Ժան. 11: Լ. Մելիքսեթ-Բեկ, նշվ. աշխ., էջ 137, 144:

3 Գ. Ախվերդյան, նշվ. աշխ., էջ Զ և Ժան. 5: Լ. Մելիքսեթ-Բեկ, նշվ. աշխ., էջ 29: Մ. Հասրաթյան, նշվ. աշխ., էջ 184:

բականի)։ Եվ ահա 1765—1768 թթ. մենք նրան տեսնում ենք իրրե տեր-Ստեփանոս ծխատեր քահանա Սահնգիլոյի (Ջաքաթալայի) Կախ-ավանի հայոթյան, 1768 թվականից սկսած միառժամանակ նորից Թրիլիսիում իրրե ալրիս-ցած քահանա (աշուշտակ) և ապա իրրե կուսակրոն քահանա (արեղա) և վարդապետ, նույնիսկ լուսարար Հաղպատի Ս. Նշան վանքում, որն այդ պահին Բորչալուի հետ միասին Քարթլ-Կախեթի միացյալ թագավորությանն էր ենթակա։ Եվ այս է պատճառը, որ Ջորաղետի (Բորչալուի) զույգ եպիսկոպոսական աթոռները՝ Հաղպատն ու Սահահինը ունեին Թրիլիսիում իրենց առաջնորդանիստ եկեղեցիները. մեկը՝ «Բերդի մեծ եկեղեցի» կոչվածը (որը XIII դարում հայտնի էր իրրե «պարոն Ումեկի եկեղեցի», հետագայում՝ «Կաթողիկե ս. Աստվածածին», իսկ վերջերս՝ «Մեյդանի ս. Գևորգ»)⁴, մյուսը՝ «Բերդի փոքր եկեղեցի» կոչվածը (որը VIII դարում հայտնի էր իրրե վրացական «Քառասնից եկեղեցի», հետագայում՝ հայկական «Հրեշտակապետաց»)։ Վերջինս քանդվեց 1930-ական թվականներին։

Ի դեպ, սրանց մասին է, որ վրաց մեծանուն պատմաբան և աշխարհագիր Վախուշտի արքայազնը իր 1745 թ. կազմած «Վրաստանի աշխարհացույցի» մեջ նշում է, որ «Քարթլիի թագավորը եպիսկոպոս է կարգում [Հաղպատ-Սահահնոմ], գրեթե [սրա մասին նախորդ] հոգևոր տիրոջ [այսինքն՝ հայոց կաթողիկոսին], քանի որ որքան էլ Քարթլիում հայեր են բնակվում, [րոտորը] Երա (հոգևոր տիրոջ) հոռն են կազմում»⁵։

Սալաթ-Նովայի սերտ կապը Վրաստանի և, առանձնապես, Երա մայրաքաղաք Թրիլիսիի հետ հատկապես թելադրում է մեզ պատկերացնել այն միջավայրը, ուր ծնվել, ապրել, աշխատել, հոգվել, հրճվել, ստեղծագործել և ի վերջո մահացել ու թաղվել է մեծ երգիչը։

Դա ֆեոդալական-ճորտատիրական Վրաստանն էր, որը 1469 թվականից սկսած բաժան-բաժան էր եղած երեք թագավորությունների, այն է՝ Քարթլիի (կենտրոնը՝ Թրիլիսի), Կախեթի (կենտրոնը՝ Գրեմի և Թելավի) և Իմերեթի (կենտրոնը՝ Քութայիսի)⁶. չհաշված հինգ կիսանկախ իշխանությունները։ Սրանցից Քարթլին և Կախեթը 1762 թ. հունիսի 29-ից միացան պերսո ալ ռուսացի հիմունքներով վերածված միասնական Քարթլ-Կախեթի թագավորության։ Էրեկլե (Հերակլ) II արքայի գլխավորությամբ, որը մինչ այդ լուկ Կախեթի մասնավոր թագավորության գլուխն էր (փոքրահասակ լինելու պատճառով հայտնի էր «Պատարակախի», այսինքն՝ «Փոքրիկ կամ պստիկ Կախ» = «Կախիկ» հորոգրչումով) և, միառժամանակ, Քարթլիի գահի թագաժառանգը։

Սալաթ-Նովայի օրոք Թրիլիսիում, որպես լուկ Քարթլիի թագավորության մայրաքաղաքում, նստած էին հաջորդաբար Վախթանգ VI-ը (1703—1724),

⁴ Այս եկեղեցին Գ. Լ. Սոխայան (Սալաթ-Նովա, Երևան, 1932, էջ 38) սխալմամբ կոչում է «Քարափի ս. Գևորգ», մինչդեռ Քարափի ս. Գևորգը այլ եկեղեցի է, որը գտնվում է Սուրբաթի լեռնաշղթայի լանջին, Նաբիդալա հինավուրց բերդի և Փեթխան (Բեթղեսեմ) եկեղեցու զանգակատան միջև։

⁵ Լ. Մ. Մելիքսեթ-Քեկ, Վրաց ազդյութները Հայաստանի և հայերի մասին, III, Երևան, 1955, էջ 79, 270։

⁶ Անթուլյատրիլի է այս աշխարհագրական անունների դործածելը հայերենում «Քարթալիսիա» կամ «Քարթալին» (սուսերեն աղավաղված «Карталиния»-ից), «Կախեթիա» (սուս. «Kaxetia») և «Իմերեթիա» (սուս. «Imeretia») ձևերով, ինչպես մեր մի քանի հայ գրողների երկերում ենք հանդիպում։

որի անունը հռչակվում է հայ գրականության մեջ Գավիթ-Բեկի գործունեության կապակցությամբ, և Թեյմուրազ II-ը (մինչ 1762 թ.), իսկ Քարթլ-Կախեթի միացյալ թագավորության մայրաքաղաք Թբիլիսիումն էին նստած նախ էրեկլե II-ը (1762—1798) և վերջապես Գիորգի XII-ը (1798—1800):

* * *

Վրացական գրավոր աղբյուրները կամ, ավելի ճիշտն ասած, սկզբնաղբյուրները Սայաթ-Նովայի մասին, որի տեսությունն է նվիրված այս մեր հոգվածը. բնականաբար, հիշյալ թագավորների գլխավորած վրացական տերության կացության կնիքն են կրում, որով ճշտվում են մեծ երգչի կյանքի և գործունեության խնչպես ընդհանուր շրջանակները, նույնպես և առանձին մոմենտները: Ըստ այսմ, անկարելի է հաշվի չառնել հայ տարրի մասնակցությունը Վրաստանի պետական և կուլտուրական կյանքում, մասնավորապես առևտրական և արհեստավորական շերտերի դերը Թբիլիսիի, Թելավիի և Կախավանի հասարակություններում և, մասնավորապես, հայ համայնքներում, ուր անընդհատ գործել է Սայաթ-Նովան, նախքան կմունքի Հաղպատի վանքի միարանության շարքը:

Վրացական աղբյուրները Սայաթ-Նովայի մասին այլևայլ բնույթի են: Առաջին հերթին դրանք նրա վրացերեն խաղերն են, որոնք տրամադրում են մեզ, մի կողմից, արժեքավոր ինքնակենսագրական տվյալներ երգչի մասին և, մյուս կողմից, նյութեր երգչի բանաստեղծական ավյունի մասին վրացական պոեզիայի և տաղաչափության բնագավառում: Երկրորդը ժամանակակիցների և նրանցից բխող վկայություններն են երգչի մասին, խնայիսիք են Սայաթ-Նովայի որդոց՝ Մելքոյի և Հովհանի (Իվանի), արքայազներ Հովհան և Թեյմուրազ Բագրատիոնների, Պ. Խոսելիանու և այլոց մատուցած նյութերը, մասնավորապես Հովհան արքայազնի «Կալմասորա» («Կալի մասունք») երկը:

Սայաթ-Նովայի վրացերեն խաղերը, որոնք մեծ երգչի դավթարի առաջին մասն էին կազմում, անհետացած են: մինչդեռ երկրորդ մասը շուրջ 47 հայերեն խաղերի վրացատառ գրությամբ և երրորդ մասը շուրջ աղբյուրներն խաղերի հայատառ գրությամբ⁷, փոքր ի շատե բավարար վիճակումն են հասել մեզ (տե՛ս երևանի գրական թանգարանում պահվող ձեռագիրը): Մյուս կողմից, փաստ է, որ Սայաթ-Նովայի 15-ի չափ վրացերեն խաղեր, այլև 8 խաղ և 3 տարբերակ հայերեն, նաև 2 քառալեզու խաղեր հայտնագործվեցին Լևոնգրադի Ասիական թանգարանի (այժմ ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի Ասիայի ժողովուրդների ինստիտուտի վրացերեն ձեռագրերի հավաքածուի) Georgica № 222-ում: Սրանցից 15-ի չափ վրացերեն խաղերը գեղեցիկ 1899 թ. ընդօրինակել էր երիտասարդ Ն. Մառը, որը իմանալով Սայաթ-Նովայի վրացերեն խաղերը հրատարակելու Ի. Գրիշաշվիլու մտադրությունը, իր ընդօրինակումները ուղարկում է վրաց բանաստեղծին: Իսկ վերջինս այն մոծում է իր ժողովածուում, կցելով այդ 15 խաղին այլևայլ աղբյուրներից քաղած շուրջ 13 խաղեր, հասցնելով այսպիսով երգչի վրացերեն խաղերի ընդհանուր քանակը 28-ի:

⁷ Աղբյուրներն խաղերը գրված են հայերեն տառերով, բայց որ երգիչը տիրապետելով հայերենին և վրացերենին՝ արարել են գրերին չի տիրապետել: Իսկ հայերեն խաղերը գրի է առել վրացերեն տառերով, որպեսզի իր ստեղծագործությունը մեծաշնորհ լինի հայերենին և վրացերենին տիրապետող խաղասացների համար:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե Սայաթ-Նովայի դավթարը ինչու է հասել մեզ թերի վիճակում, այսինքն առաջին առաջին մասը կազմող վրացերեն խաղերի, դրա մասին մենք ի վիճակի ենք առաջարկել այսպիսի ենթադրություն. 1765 թվականից սկսած Սայաթ-Նովայի դավթարը ձեռքից ձեռք է անցել, նույնիսկ դեղերել քաղաքից քաղաք՝ Թրիխսիից Մոզդոկ (1795 թ.) և Մոզդոկից նորից Թրիխսի (XIX դարի սկզբներին), իսկ Թրիխսիում երգչի թոռ՝ տեր-Մովսես ա. ք. Սայաթյանցիի ժամանակավորապես բժ. Հովհաննես Պոնդոյանցի միջոցով բժ. Բևորդ Ախվերդյանին (Յուրի Ախվերդովին) է հասել⁸, ապա նորից տեր-Մովսեսի ու նրա ժառանգների մոտ, որոնցից այն Հովհ. Թումանյանը գնել է Կովկասի հայ գրողների ընկերության համար. իսկ այստեղից այն անցել է Հայաստանի գրական թանգարան։ Գ. Ախվերդյանի՝ Սայաթ-Նովայի դավթարի վրա թափած աշխատանքի միջոցին, ասել է մինչև 1852 թվականը, այս դավթարը թերի է եղել, այսինքն նրանից պոկված է եղել վրացերեն խաղերը պարունակող առաջին մասը։ Եւ այդ խաղերը պահպանված են երգչի կրտսեր որդու ձեռքով արտագրած Պետերբուրգյան (Լենինգրադյան) ժողովածուում։ Գուցե դավթարից պոկած այդ առաջին մասն էր, որ տարվել էր Պետերբուրգ և աղբյուր ծառայել Georgica № 222 ձեռագրի ձեռագրման միջոցին։

Վրացերեն խաղերում պահպանված տվյալներով մեծ երգչի մկրտություն (ավագանի) անունն է եղել, Թրիխսիի հայերի և վրացոց արտասանությամբ, «Արուիին», որը նույն «Հարությունն» է։ Նույնը առկա է հայերեն № 23 (ըստ Գ. Ախվերդյանի) խաղին կցված վրացատառ հիշատակարանում Թրիխսիի հայոց բարրառով, ուր ասված է (էջ 126). «ք. էս դիվանի խիստ լավն էլ. օվոր սովորի, օղորմի ասե. հիմի գուլիմ թե հայեվար ասիմ. ամեն աստուծ. յիս, մզդուսու վուրթի Արուիինս, պստուց ինչ օրի յարսն տարին գլուխ դրի ամեն խաղին. ամա սուրի Կարապետի կարողությունով սովրեցի քամանչեն ու չոնդուրն ու [թ]ամբուրեն»⁹։

Վրացերեն խաղերից մեկում երգիչը ասում է (այստեղ և ստորև թարգմանությունները վրացերեն խաղերից մենք տալիս ենք աշխարհարարով և ոչ Թրիխսիի բարրառով)։

Ես Սայաթ-Նովա կոչված Արուիինն եմ,
Այնպիսի խոսք ասեմ, որ երկինքը սկսի սրտապ¹⁰։

Ի դեպ, հետաքրքրությունից դուրկ չէ այն մեկնարանությունը, որը կցել է այս տողերին երգչի կրտսեր որդին (ըստ Լենինգրադյան ձեռագրի՝ Georgica № 222) այսպիսի բովանդակությամբ. «Սա՛ թեջնիս եղանակով, առակի օրինակով արտասանած հայհոյանք է։ Սայաթ-Նովան Թելավիում կպել է երջան-

8 Գ. Ախվերդյան, նշվ. աշխ., էջ ԺԳ. Լ. Մելիքսեթ-Քեկ, Սայաթ-Նովայի թոռ՝ տեր Մովսես ա. ք. Սայաթյանց. «Էջմիածին», 1960, № 8, էջ 30—31։

9 Գ. Ախվերդյան, նշվ. աշխ., էջ 108. Լ. Մելիքսեթ-Քեկ, հիշ. գիրքը, էջ 30։ Նույնի՝ Սայաթ-Նովայի հայերեն խաղերի լրիվ ժողովածուն, Թրիխսի, 1935, էջ 65 (վրացերեն)։

10 Ի. Գրիշաշվիլի, նշվ. աշխ., էջ 97 (վրացերեն), հմմտ. Մ. Հասրաթյան, նշվ. աշխ., էջ 115։

կահիշատակ վախժանգ արքայազնի (Հերակլի որդու) հետ: Մի անմիտ մարդ խարար է տարել (հորը), 1751 թվականին»¹¹: Հետևապես վերև նշած արտահայտությունը վերաբերում է այն պահին, երբ Սայաթ-Նովան գործել է Ռելավիում:

Մի այլ վրացերեն խաղում երգիչը ասում է.

Վրաստանի յազավորի սագանդարն եմ ես,
Ինձ Սայաթ-Նովա: Արարին եմ կանչում¹²:

Անկախ այս ամենից, «Արուժին» ձևը կրկնվում է և հայերեն խաղերի կցորդներում, որոնք գրեթե բոլորը վրացատառ վրացերենով են գրված, 1753—1759 թթ. շուրջը, առնվազն 37 անգամ, օրինակ, րստ Գ. Ախվերդյանի (և մեր՝ 1935 թ.) հրատարակության՝ X № 1, 3, 4—6, 8, 10—14, 16, 18, 20—28, 31, 32, 34—36, 38—46:

Գրականության և արվեստի աշխարհում Արուժինը հայտնի է եղել կեղծանունով, որը տարբեր ձևով է հնչվել հայոց, վրաց և ադրբեջանցիների միջավայրում. հայերեն՝ Սայաթ-Նովա, ադրբեջաներեն՝ Սայադ-Նովա, Սայաթ-Նավա. վրացերեն՝ Սայաթ-Նովա, Սաաթնավա, Սաաթնաո, Սաոթնաո, Սաոթնամա, Սաաթնամա, Սաաթլամա, Սաադնամա, Սավաթնամա, Սավաթնավա, Սավաթնովա, Սաաթնամա և այլն¹³:

Այս կեղծանունը բաղկացած է երկու բառից՝ արարերեն «սայադ»—տեք, իշխան, վարպետ, որը հետագայում մասնագրական աշխարհում վերածվել է «սեյդ»-ի (այստեղից է, ի միջի այլոց, երգչի կրտսեր որդու՝ Հովհանի հորջորջումը «Իվան Սեյդով»): և պարսկերեն-տաջիկերեն «նավա», «նեվա», «նավո»—նվագ, մեղեդի (այստեղից է, ի միջի այլոց, Արեշեր-Նավոյ): Հետևապես, «Սայադ-Նավա»—«Սայաթ-Նովա»-ն պիտի նշանակի նվագի կամ մեյրղիայի տեք, իշխան, վարպետ:

Վրացերեն խաղերից մեկն էլ նշանակալից է նրանով, որ այնտեղ երգիչը շեշտում է, որ ինքը

Մոռ միևուճար (ճար ու ճրագ) որդիս է¹⁴:

Հետևապես, երգիչը չի ունեցել բույր, այն էլ ամուսնացած Մոզդոկում, ինչպես Ի. Գրիշաշվիլին է ենթադրել¹⁵:

1765 թվականը Սայաթ-Նովայի կյանքում մեծ բեկման տարին է, որը երկու հիմնական շրջանի է բաժանում նրա գործունեությունը. մեկը՝ մանկությունից սկսած մինչև այդ բեկումը, մյուսը՝ այդ բեկումից սկսած մինչև մահը:

11 Գ. Աստվածատրյան, Սայաթ-Նովայի անհայտ երգերից, «Ազգագրական հանդես», X, Թիֆլիս, 1903, էջ 110—111, հմմտ. ի. Մելիքսեթ-Քեկ, Սայաթ-Նովա, էջ 43:

12 Ի. Գրիշաշվիլի, նշվ. աշխ., էջ 121: ի. Մելիքսեթ-Քեկ, նշվ. աշխ., էջ 43: Ե. Հասրաթյան, նշվ. աշխ., էջ 115:

13 Ի. Գրիշաշվիլի, նշվ. աշխ., էջ 83: Գ. Լեոնիձե, Մոսսանի Սաաթնավա, Թիֆլիսի, 1930, էջ 49—50 (վրացերեն):

14 Ի. Գրիշաշվիլի, նշվ. աշխ., էջ 112, ի. Մելիքսեթ-Քեկ, Սայաթ-Նովա, էջ 31, 58, հմմտ. Մ. Հասրաթյան, նշվ. աշխ., էջ 94:

15 Ի. Գրիշաշվիլի, էջ 40, հմմտ. ի. Մելիքսեթ-Քեկ, էջ 58, հմմտ. Մ. Հասրաթյան, էջ 94:

ի միջի այլոց, երկրորդ շրջանը դա այն շրջանն է, երբ մեծ երդիչն ընդունում է երրորդ անունը՝ Ստեփան, կոչվելով իրեն քահանա «տեր-Ստեփանոս» (վրացերեն «տեր-Ստեփան»)։ Ինչպես հիշվում է Կախ-ավանի 1766 թ. ձեռագրում և 1765 թ. դավթարում։

«Հաղպատի հայոց թեմի առաջնորդը (անունը, դժբախտաբար, հայտնի չէ), որին ենթակա էր Թրիխսիի հայոց եկեղեցիների մեծ մասը¹⁶ և Սոփիսի (Բորչալուի) ու Կախեթի հայությունը,—գրել ենք մենք նորերս Սայաթ-Նովայի կենսագրական ակնարկում¹⁷,—Հերակլ արքայի առաջարկին՝ հեռացնելու [«հանցագործ»՝ Սայաթ-Նովային Թրիխսիից, տալով նրան ապրուստի միջոց որևէ տեղ, ոչ մի ելք չի գտնում, բացի նրանից, որ ձեռագրի երդիչն, հակառակ նրա ցանկության, ծխատեր քահանա Կախ-ավանի հայոց եկեղեցու հոմար Սահնգիրյում (Ջաքաթալյում) հավանական է, նույն 1765 թ., վերականգնելով նրանից տեր-Ստեփանոս (վրացերեն տեր-Ստեփան)»։ Իսկ «Թրիխսիից մեկնելուց առաջ,—ինչպես մենք գրել ենք,—Սայաթ-Նովան կարգի է բերում իր խաղերի դավթարը, որը, սակայն, հետո չի տանում, այլ թողնում է իր ընտանիքին, որը մնում է Թրիխսիում»։

Ահա այս դավթարին XVIII դ. վրաց գրականագետ Յովանե Պենտելաշվիլին կցել է ղեկեցիկ ձեռքով գրված հիշատակարան վրացերեն լեզվով (էջ 8), որը մենք այստեղ բերում ենք թարգմանաբար ամբողջությամբ. «Այս խաղերը բոլորը Սայաթ-Նովայի ասածներն են։ Ով ուղղահավատք և քրիստոսասերք, սրա դուռն ու այս խաղերի ասողը շատ օր է մթնացրել ու դիշեր լուսացրել սրաց ասելով։ Այժմ, այս ենք ձեզանից, սրա կարդացողներ՝, աղաչում, որ սրա ասողին բարվոք և ողորմի ասելով հիշատակեք. և դուք էլ Քրիստոսի բերանով բարվոք կհիշատակվե՛ք։ Ես, Պենտելենց Յովանեն, գրեցի այս գեկույցը մայիսի 1-ին քրոնիկայի 453 [= 1765 թ.]»¹⁸։

Այս հիշատակարանը գուրկ չէ հետաքրքրությունից մի քանի տեսակետից։ Նախ՝ նրանով, որ այն գրված է Յովանե (Իոանե) Պենտելաշվիլու ձեռքով, որը եղել է Հերակլ II-ի և Գիորգի XII-ի գլխավորապես և միաժամանակ թարգմանել է հայերենից վրացերեն Այգեկցու «Այվլեսագիրքը»¹⁹։ Իսկ երկրորդ՝ որ Սայաթ-Նովայի դավթարը կարգի է բերված 1765 թ. մայիսի 1-ին, երբ նա ղեկն չէր ուղեորվել ղեպի իր արսորավայրը՝ Ջաքաթալյայի Կախ-ավանը։

Նույն դավթարում տեղ-տեղ աչքի են ընկնում երկու խումբ վրացատառ հիշատակագրություններ վրացերեն լեզվով՝ երկու տարբեր (անգրագետ կամ կիսապրագետի) ձեռքով գրված։

Դրանցից մի խումբը և հիշատակագրություններ են 43, 61, 70, 137 և 160 էջերում, գրված, անկասկած, 1765 թ. հետո, երդչի ավագ որդու՝ Մելքոյի ձեռքով և Մելքոյ տնվան հիշատակությամբ²⁰, որոնք բացարձակապես անիմաստ

¹⁶ Սրա մասին տես Գ. Ախվերդյան, նշվ. աշխ., էջ ԺԹ։

¹⁷ «Սովետական Վրաստան», 1963, № 58—«Կոմունիստ» (Քարու), 1963, № 125։

¹⁸ Գ. Ախվերդյան, նշվ. աշխ., էջ ԺԳ։ Լ. Մ. Մելիքսեթ-Քեկ, Սայաթ-Նովա, էջ 86—87։

¹⁹ Սրա մասին տես Ի. Գրիշաշվիլի, նշվ. աշխ., էջ 41։ Կ. Կեկելիձե, Վրաց գրականության պատմություն, Հին գրականություն, 1, Թրիխսի, 1958, էջ 432, վրացերեն)։ Լ. Մ. Մելիքսեթ-Քեկ, Սայաթ-Նովա, 1936, էջ 86, ծան. 3։ Նույնի՝ Սայաթ-Նովայի հայերեն խաղերի լրիվ ժողովածուն, 1935, էջ 19, ծան. 2։

²⁰ Հրապարակված են մեր գրքում՝ Սայաթ-Նովա, 1930, էջ 58, 60։

բառակույտեր (абрака-дабра) են ներկայացնում, ոչինչ չհասկացնելով ընթերցողին, բացի նրանից, որ շորս անգամ ասված է. «քո (այսինքն Սայաթ-Նովայի) որդիդ Մելքո»-ն (էջ 43, 70, 137 և 169), և մի անգամ էլ նշված է. «քո (այսինքն Սայաթ-Նովայի) աշակերտ (բնագրում՝ Ղալաֆիրդ)՝ Մելքո, աչքի լույսս. պարոն Շավերդ պապից ինչ իմացավ և ինչ տեղեկացրեց» (էջ 61): Հետևապես, Մելքոն հիշատակում է իր սպապ Շավերդին, որը տեղյակ է եղել երգչի արտերի մասին և ի վիճակի պիտի լիներ մի բան իմանալու նրա մասին և ընտանիքին հաղորդելու: Սակայն սրա մասին մի փոքր ներքև:

Կիսագրագետ հարազատներից մեկի ձեռքով պիտի լինի գրված նաև հիշատակագրությունների երկրորդ խումբը՝ վրացատառ վրացերենով, այն էլ թրիլիսարենակ հայերի ժարգով, դավթարի երկու տարբեր էջերում (24 և 84), գրեթե միևնույն բովանդակությամբ, յուրաքանչյուրը 5-ական տողից բաղկացած²¹: Մեկը՝ «ք. նրանի աստված տեր-Ստեփանին խաղաղ վերադարձնի, ինձ այս դավթարը կարդացնի, մուրազս սրտումս չմնա և իմ գլուխը նրան ծառայե»: Մյուսը՝ «ք. նրանի տեր-Ստեփանը խաղաղ վերադառնա, ինձ այս գիրքը կարդա, իր գավախների երկարակեցության համար, մուրազը սրտումս չմնա, և իմ մեղապարտ գլուխը նրան ծառայե՝ ամեն»:

Ակներև է, որ այս հիշատակագրությունները գրված են 1765—1768 թթ. միջոցին, երբ Սայաթ-Նովա—տեր-Ստեփանոս քահանան արտրավայր Կախավանում էր գտնվում և հարազատները երանի էին տալիս, որպեսզի նա ողջ և առողջ վերադառնա ու իր դավթարի նյութով հաղորդակից լինի տնեցիներին, որոնք Թրիլիսիում էին մնացել²²:

* * *

Վրացական աղբյուրներն ընձեռում են մեզ մի շարք տվյալներ Սայաթ-Նովայի ծննդարանությունը ճշտելու գծով: Այսպես, օրինակ, երգչի դավթարի վրացատառ վրացերեն հիշատակագրությունները տալիս են, ինչպես վերև տեսանք, նրա որդու՝ Մելքոյի անունը: Լենինդրադի Georgica № 222 ձեռագիրը ոչ այլ ինչ է, բայց եթե երգչի կրտսեր որդու՝ Իվան Սեիդովի աշխատունակության և աշխատասիրության արդյունք:

Սայաթ-Նովայի կնոջ վրացերեն տապանագիրը (նշխիվանքի գերեզմանատանը), որը վերծանել էր Գ. Ախվերդյանը, կարդացվում էր այսպես. «բւս ունվ. Բ. սախլավսաւ ւամասաւ շինա վաւ սախլար-նովիս մեռողլե մաւմաւ. շենդորա միքժանկ», այսինքն. «Քրոնիկոնի 456 [=1768]: Այս գերեզմանում ամփոփված էմ Սայաթ-Նովի կողակից Մարմարը. ինձ ողորմի ասեք»²³:

Այս նյութին Գ. Ախվերդյանը կցում է այսպիսի եզրակացություն. «Տապանագրի տարին՝ երկրիս սովորութենով, պիտի իմանանք չէ թե քար դնելուն, բայց որպես մահվան տարին՝ որ է 1768: Երբեք չենք կարող հաշվել Սայաթ-

²¹ Հրատարակված են մեր գրքերում՝ Սայաթ-Նովա, 1935, էջ 88—89, Սայաթ-Նովայի հայերեն խաղերի լրիվ ժողովածուն, 1935, էջ 19 (երկուսն էլ վրացերեն):

²² Լ. Մելիքսեթ-Բեկ, Սայաթ-Նովա, կենսագրական ակնարկ, «Սովետական Վրաստան», 1963, № 58—«Կոմունիստ» (Քարու), 1963, № 125.

²³ Գ. Ախվերդյան, էջ 111: Այս տեղեկությունը մենք ստուգել ենք 1912—1913 թթ., երբ հիշյալ տապանագիրը արդեն անհետացած էր. տե՛ս մեր՝ Սայաթ-Նովա, 1930, էջ 55—56 և ծան. 7, հմմտ. նաև մեր հոդվածը՝ «Սովետական Վրաստան», 1963, № 58—«Կոմունիստ» (Քարու), 1963, № 125:

Նովու կրոնավորելն էս ժամանակից առաջ. թե մե երկու տարի էլ ետ դնենք ու ընդունենք 1770-ն, հայնժամ մեր երգիչն կրոնավորելիս էլեւ պիտի քլի 58 տարեկան»²⁴:

Սակայն այս եզրակացությունը հակասում է այն փաստին, որ Սայաթ-Նովան Կախ-ավանի ծխատեր քահանա էր 1765—1768 թթ. հետևապես Դ. Ախվերդյանի նշած 1768 և 1770 թվականներից առաջ, իսկ կուսակրոն էր դառել սույն թվականներից ավելի ուշ:

Եթե Սայաթ-Նովայի հոր անունն էր, Կախ-ավանի 1766 թ. ձեռագրի համաձայն, «մահտեսի Կարապետ», հապա ո՞վ պիտի լինի երգչի 1765 թ. դավթարում նրա որդու Մելքոյի հիշատակած «Շավերդ պապը»: Պարզ է, որ միմիայն Սայաթ-Նովայի կնոջ՝ Մարմարի հայրը: Բայց չէ՞ որ «Շավերդը» վրացերեն արտասանությունն է «Շահվերդ»-ի²⁵: Իսկ Շահվերդը, այստեղից «Շահվերդ-յան» ազգանունը, Ջորաղետի Այգեհատ կամ Բքահատ գյուղի բնակիչներին հատուկ անուն-ազգանունն է, որով համատարանվում է այն տվյալը Սայաթ-Նովայի մասին, որ նա իբր թե «սանահնեցի» է եղել²⁶, որը պիտի հասկանալ իբրև Սանահնի շրջանի գեղջուկի տնփեսա (վրացերեն «զեղսիձե»):

* * *

Հոգևորականի սքեմ հագնելով, Սայաթ-Նովան չի դադարել ստեղծագործելուց զրական ասպարեզում, սակայն այսուհետև ոչ իբրև աշուղ կամ սաղանդար, այլ լոկ խաղասաց-բանաստեղծ: Մասնավորապես Կախ-ավանում եղած միջոցին (1765—1768) ժամասացությունից ազատ ժամերը նա նվիրում է մի կողմից դերձակության, մյուս կողմից՝ զրական պարապմունքներին, կազմելով 1766 թ. հայերեն զրաբարով ժողովածու-անթոլոգիան, նաև հորինելով խաղեր վրացերեն լեզվով, որոնք մեզ հասել են «Ստեփանե մկերվալի»-ի (դերձակ Ստեփանի) ստորագրությամբ:

Որ Սայաթ-Նովան եղել է ոչ թե ջութակ, ինչպես ենթադրվում է, այլ դերձակ, երևում է նրա խաղերում ցրված համապատասխան արտահայտություններից. «գուրձավուր իմ՝ բերքարա խայաթ», «հետի տիղ դուքան բաց անիմ կարբս մունաթ չը քաշե», «վունց ձեիլ գուզե, վոնց կրտիչ՝ կարբս մունաթ չը քաշե» և այլն: Այս թեզը բխում է նաև այն հանգամանքից, որ վերոհիշյալ ձեռագիր ժողովածուն, 1768 թվականից սկսած դեղերելով դերձակների շրջանում, ապաստան է գտել Թավրիզում XIX դարի սկզբներից, անցնելով դերձակ Սողոմոն Մելիք-Արրահամյանի մոտ²⁷:

Սակայն տեսնենք ի՞նչ էր ներկայացնում իրենից Կախ-ավանը և նրա հայությունը անցյալ դարերում: Կախ-ավանում ծնված և այնտեղ մեծացած հայտնի վրացագետ ինգիլոյեցի Մոսե Ջանաշվիլին (1855—1934) այսպես է բնութագրում իր ծննդավայրի կացությունն իր օրոք. «Գյուղի մեջտեղը գտնվում է բավականին մեծ շուկա, ուր առևտրով են զբաղված ռախոբը, մահմեդականները»:

24 Գ. Ախվերդյան, նույն տեղում:

25 Հմմտ. սահման — վրաց. ոսմանի, Շահանշահ — վրաց. Շահն և այլն:

26 Ս. Իորդանիշվիլի, Թեյմուրազ արքայազնի զրադարանի ցուցակը, Թբիլիսի, 1948, էջ 40 (վրացերեն), հմմտ. А. Иагарели, Сведения о памятниках грузинской письменности, СПб, 1894, էջ 181—182:

Գ. Լեոնիձե, Մոսսեսի Սաթնավա, Թբիլիսի, 1930, էջ 10 (վրացերեն):

27 Լ. Մելիքսեթ-Քեկ, Սայաթ-Նովա, էջ 93—99:

րը և հաստատվեցին ինքիլոյցիները: Կախ-էլիսենում այսպիսի շուկա ոչ մի տեղ գոյություն չուներ, այնպես որ այստեղի առևտուրը բավարարում է ամբողջ այս անկյունի կարիքները»²⁸:

Այս վկայությունը, անշուշտ, պատկերում է Կախ-ավանի տնտեսական կյանքը, ուր մեծ դեր էին կատարում հայ առևտրականները, որոնք դեռևս XVIII դարում, այսինքն Սալթ-Նովա—տեր-Ստեփանոսի օրոք (1765—1768), ծուխ (համայնք) էին կազմած, այն է՝ բավականին ունեւոր վիճակով, ինչպես վկայում է Սիմեոն ամենաքն հայոց կաթողիկոսի անվան հետ կապված «Առ Կախ կոչեցեալ դասապայի ժողովրդական շնորհակալութիւն և միամտութիւն վասն յղեալ դժնձանակադրամին իւրեանց» վերնագիրը կրող (1767—1770 թթ.) փաստաթուղթը²⁹:

1765 թ. բեկման մոմենտից սկսած Սալթ-Նովան պիտի խուսափեր ոչ միայն հորինել իր խաղերը Սալթ-Նովա ստորագրությամբ, այլև զրի տոնելուց այն իր սեփական ձեռքով: Իսկ առանձին անհատներ վրացիներից, լսելով նրա վրացերեն խաղերը, շտապում էին դրանցիւ այդպիսիները քողարկված ձեռով, հնարելով նոր կնդծանուն կոնսամիւնացիայի գծով, ինչպես, օրինակ, «Գամառ-Քաթիպա»-ն է հայ գրականության մեջ (Գևորգ Քաթանյան — Միքայել Բեմուրյան — Ռափայել Պատկանյան):

Գերձակ Արութին

խաղասաց Սալթ-Նովա

Առեփան քահանա

խաղասաց Ստեփան դերձակ

(մեկերսե Ստեփանե մկերվալի)³⁰:

Սակայն ինչով է ապացուցվում Սալթ-Նովա—տեր-Ստեփանի և դերձակ Ստեփանի (Ստեփանե մկերվալի) նույնացումը³¹:

Ճիշտն ասած, այս խնդիրը մենք ենք հարուցել և արծարծել դեռևս 1929—1930 թվականներին, հիմք ունենալով այն փաստը, որ «Ստեփանե մկերվալի»-ի (Ստեփան դերձակի) վրացերեն 9 բանաստեղծություններից, որ մենք էնք հրատարակել նույն թվականին³², երկուսը տարբերակներում հայտնի են իբրև Սալթ-Նովայի խաղեր, քանի որ Սալթ-Նովայի ստորագրությունն են կրում (ի դեպ, նշենք, որ դրանք չեն մտել Մ. Հասրաբյանի կազմած ժողովածուի մեջ): Այդ խաղերից մեկը Սալթ-Նովայի վրացերեն խաղերի ժողովածուի մեջ էր մտնել Ի. Գրիշաշվիլի 1918 թվականին³³, իսկ մյուսը՝ իր «Վրաց գրականության պատմության» II հատորի մեջ՝ Կ. Կեկելիձեն 1924 թվականին³⁴, երկուսի մեջ էլ Սալթ-Նովան հանդես է դալիս «Մաջնուն» ստորագրությամբ (վերջին տան մեջ):

28 Մ. Ջանաշվիլի, Սաինգիլո, «Վաղմի Վրաստան», II, Քրիլիսի, 1911—1913, էջ 70 (վրացերեն):

29 Գյուտա. ք. Աղանյանց, Գիվան հայոց պատմության, հատ. VIII (Սիմեոն կաթողիկոսի հիշատակարան, մասն երկրորդ [1767—1770]), Քիֆլիս, 1908, էջ 401:

30 Լ. Մեկերսեթ-Քեկ, նշվ. աշխ., էջ 98:

31 Սրա դեմ տե՛ս Գ. Լեոնիձե, Մգոսանի Սաաթնավա, Քրիլիսի, 1930, էջ 55—57: Յակոբ Բալախաշվիլի, Երկու հարցի շուրջը Սալթ-Նովայի կենսագրությունից, «Չվենի թաղա» [=Մեր սերունդը], 1939, № 7, էջ 62—64 (վրացերեն):

32 Լ. Մեկերսեթ-Քեկ, Սալթ-Նովա, էջ 147 (149—160):

33 Ի. Գրիշաշվիլի, Սալթ-Նովա, էջ 106 (վրացերեն):

34 Կ. Կեկելիձե, նշվ. աշխ., II, Քրիլիսի, 1924, էջ 485—486, նույնը, 1941, էջ 622—623, նույնը, 1952, էջ 565—566, նույնը, 1958, էջ 680—681:

Ի նկատի ունենալով այս փաստը, մենք 1930 թ. դիմեցինք հիշյալ հեղինակներին. առաջարկելով ընտրել երկուսից մեկը. կամ այդ պույգ խաղերի Սայաթ-Նովային վերագրելը համարել կեղծիք. հետևապես հանել երգչի վրագերեն խաղերի միջոց, կամ թե չէ «Ստեփաննե մկերվալի»-ի անունով մեզ հասած բոլոր ինքն խաղերը համարել Սայաթ-Նովայի ստեղծագործություն և հետևապես, ընդունել, որ «Ստեփաննե մկերվալի»-ն Սայաթ-Նովա—տեր-Ստեփանոսի կոնտամենացիւն հորջորջումն է³⁵:

Մեր հարցադրմանը 1941 թվականին արձագանքեց Կ. Կեկելիձեն, որը ոչ միայն համաձայնվեց մեր թեզի հետ, որ «Ստեփաննե մկերվալի»-ն (ղերծակ Ստեփանը) և Ստեփան քահանա—Սայաթ-Նովան միևնույն անձնավորությունն է, այլև նրա հետ, որ Սայաթ-Նովան ունեցել է նաև «Մաջնուն» կեղծանունը³⁶: Ապա Կ. Կեկելիձեն շարունակում է. «Ելնելով սրանից, մենք հանգում ենք այն տեսակետին, որ Սայաթ-Նովային և նաև այն ինչ ոտանավորները, որոնք «Ստեփաննե մկերվալի» անունով են հայտնի ձեռագրերից մեկում և որոնք Լ. Մելիքսեթ-Քեկն է հրատարակել (այստեղ ծանոթագրության մեջ հիշված է վրացերեն ձեռագրերի S հավաքածուի № 1513, էջ 36—37, նաև Լ. Մելիքսեթ-Քեկ, Սայաթ-Նովա, էջ 152)³⁷:

«Եթե այս հույժ սիրային-լիրիկական ոտանավորները գրված են Սայաթ-Նովայի հոգևորական կոչման մեջ մտնելուց հետո, երբ նա Ստեփան անունը ընդունեց, բնական կլիներ, որ հեղինակի ով լինելը դադարեցնելու նպատակով, «Սայաթ-Նովա»-յի փոխարեն նա ստեղծեր նոր կեղծանուն՝ «Մաջնուն»։ Բովանդակությամբ, ոճով, չափով և բառապաշարով նրանք չեն հակասում Սայաթ-Նովայի անվամբ հայտնի այլ ոտանավորներին»³⁸:

Սայաթ-Նովայի և «Ստեփաննե մկերվալի»-ի խաղերի համեմատության վրա այստեղ կանգ չենք առնում, քանի որ այս հարցին մենք նվիրել ենք մեր «Սայաթ-Նովա» գրքի (1930) ամբողջական XVI գլուխը (էջ 95—99): Միայն կ'ընենք, որ «Ստեփաննե-մկերվալի»-ն ևս պարծենում է նրանով, որ նա «հասարակ մարդ չէ, դիտեր արդյոք ո՞վ է նա» և ինքը պատասխանում՝ «հնուց ծառայած, արքաների մերձակից»³⁹: «Ստեփաննե-մկերվալի»-ն Սայաթ-Նովայի նման, ինչպես ստորև կտեսնենք, «Շահ-Պրաս» է կոչում վրաց Հերակլ II թագավորին⁴⁰: Բացի դրանից, «Ստեփաննե-մկերվալի»-ի մի խաղը (մեր հրատարակությամբ՝ № VI, էջ 154) շատ նման է Սայաթ-Նովայի «Եղծ իմ գլուխ, ինչպես խաթի մեջ ընկար» խաղին, որը հեղինակը իր ձախորդության պատճառը իր մեջ է որոնում, ասելով, որ բոլորը, ինչ որ եղավ, «իմ խելքիցն է որ եղավ»⁴¹:

Վերջապես, չի կարելի չնշել «Ստեփաննե-մկերվալի»-ի մտայնությամբ մոտիկ լինելը Սայաթ-Նովային, որի՝ Մոզնիի ս. Գևորգին նվիրված բանաստեղծությանն արձագանքում է հետևյալ քառյակը VI խաղից (մեր թարգմանությամբ).

35 Լ. Մ. Մելիքսեթ-Քեկ, Սայաթ-Նովա, էջ 94:

36 «Վրաց գրականության պատմություն», II, 1941, էջ 623, նույնը, 1952, էջ 565—566, նույնը, 1958, էջ 481:

37 Նույն տեղում, 1941, նույն տեղում, 1952, էջ 566, նույն տեղում, 1958:

38 Նույն տեղում, 1941, նույն տեղում, 1952, նույն տեղում, 1958:

39 Լ. Մ. Մելիքսեթ-Քեկ, Սայաթ-Նովա, էջ 97:

40 Նույն տեղում, էջ 154:

41 Նույն տեղում:

Սուրբ Գեորգը հույժ կենաբար է,—[սուս] միայն մեկը գիտե,
 նրա շուրջն են համախմբված բոլոր սրբերը,—նա է, որ գիտե.
 Կենաբար սյունը⁴² սփռված զոհոթությամբ բռնկում է հիվանդներին,—[Տիրոս]
 շապիկը⁴³ գիտե.
 Ուխտ եմ ունե, Երեսդ այլևս չեմ տեսնում.—աստված գիտե⁴⁴:

Սայաթ-Նովայի անձնական և հասարակական կյանքում մեծ դեր են խաղացել, թե՛ դրական և թե՛ բացասական, նույնիսկ մի տեսակ ճակատադրական, Երկու անձինք բարձր խավից, մեկը՝ վրաց Հերակլ II թագավորը և մյուսը՝ Հաղպատի հայոց թեմի առաջնորդ եպիսկոպոսը, թե արքեպիսկոպոսը, որի անունը հայտնի չէ և որը նրան քահանա է ձեռնադրել: Այս հանգամանքը թելադրում է մեզ ծանրանալ մի խնդրի վրա, որի լուսաբանությունը հնարավոր է միմյանց վրացական աղբյուրների օգնությամբ: Եւ Սայաթ-Նովայի և Հերակլ II թագավորի փոխհարաբերությունների խնդիրն է, որի հետ սերտորեն կապված է Երզնի արտաքսումը վրաց արքունիքից և նույնիսկ աքսորը Թբիլիսիից 1765 թվականին: Վրաց Իոնա կիսասարկավազ Խելաշվիլու հետ զրուցելիս Հաղպատի վանքում, Երզնի թագավորի օրոք, Սայաթ-Նովան հայտնել էր նրան, որ լավ նվագում էր սազով (չոնգուրով) և, միաժամանակ, պարսկական ձայնի վերածեց վրացական խաղերը, որ դեռևս ընդունված չէր և երբ Հերակլ II թագավորը խնջույք սարքեց և նվագողներին տարան իր մոտ, այն ժամանակ նա ևս պարսկական նվագը վրացերեն երգեց: Արքան շատ հավանեց և խալաթ պարգևեց նրան⁴⁵:

Այժմ դիմենք Սայաթ-Նովայի համապատասխան վրացերեն խաղերի վերլուծությանը: Սայաթ-Նովայի հատուկ սերն ու պատկառանքը դեպի Հերակլ II-ը նախ և առաջ նկատվում է այն խաղում, ուր Երզնի զիմում է թագավորին ասելով.

Աւֆա Ես դու... ողջ Վրաստանի սիրելին...⁴⁶:
 Դու իմ հոգևոր ծնողն (բնագրում՝ «ղեղմամա»,
 ալսինեն մայր և հայրն) ես⁴⁷:
 Երզնի հանդուրժում է նրանց, ովքեր ոչ աւֆա դիտեն, ոչ էլ վալի⁴⁸,

արքայի և վալիի, այսինքն «Գուրջստանի վալի»-ի, տակ հասկանալով Հերակլ II-ին, որի «Առքարն» է Եղեղ ինքը⁴⁹:

Հերակլ II-ին Սայաթ-Նովան Երբեմն նույնիսկ խոնթկար և շահ է անվանում: Գուլիս խոնարհեցնելով Հերակլ II-ի, իբրև ճանաչված զորավարի առաջ, Սայաթ-Նովան դիմում է նրան բացականչելով.

Սուրբ ձեռիդ է, ով, Էրեկլե խան⁵⁰:

⁴² Բնագրում՝ «Սվետի ցխովելի», հմմտ. Լ. Մելիքսեթ-Քեկ. Մցխեթայի մայր տաճարը, «Էջմիածին», 1958, № 7—8, էջ 48:

⁴³ Հմմտ. Н. Марр, Хитон Господень в книжных легендах армян, грузин и сирийцев. «Сборник статей учеников барона В. Г. Розена», СПб, 1897, էջ 67—96:

⁴⁴ Լ. Մելիքսեթ-Քեկ, Սայաթ-Նովա, նույն տեղում:

⁴⁵ «Կարմասորա», I, էջ 227 (վրացերեն): Լ. Մելիքսեթ-Քեկ, Վրաց աղբյուրները, III, 248:

⁴⁶ Ի. Գրիշաշվիլի, էջ 123, հմմտ. Մ. Հասրաթյան, էջ 127:

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ Ի. Գրիշաշվիլի, էջ 115, հմմտ. Մ. Հասրաթյան, էջ 114:

⁴⁹ Նույն տեղում:

⁵⁰ Ի. Գրիշաշվիլի, էջ 109, հմմտ. Մ. Հասրաթյան, էջ 104:

Նույնիսկ ավելին՝ Երզնի շերտի II-ին նմանեցնում է Շահ-Աբասին, ուստի և երբեմն զառն-Շահարաս մականունով է հորջորջում շերտի II-ին. Սալթ-Նովայի արքան՝ զառն-Շահարաս է՝ Երզնի⁵¹, — գոչում է Երզնի:

Նշանակում է Սալթ-Նովայի համար շերտի II-ը և՛ Շահարաս է, և զառն. նույնը արտահայտված է և «Ստեփանե-մկերվարի»-ի ստորագրությամբ մեզ հասած № VI խաղում, որը շերտի II-ի գովասանքով է սկսվում՝ այսպիսի տողով.

Աշխարհիս տիրակալ Շահարսգ զառնաս. ալիս և՛ ուզում⁵²:

Այս կապակցությամբ որոշ իմաստ է ստանում Սալթ-Նովայի «խաբար զնաց լըլըուլի մոզ» հայերեն խաղի վերջին (շորթորդ) տառեր Երզնի որդու՝ Իվան Սերգովի կցած վրացերեն ծանոթագրությունը, որի ֆաբսիմիլեն, ըստ Լենին-գրադյան Georgica № 222 ձևագրի (էջ 69բ), մենք ենք հրատարակել⁵³ և որի վերլուծությունը դարձյալ մենք ենք տվել⁵⁴:

Սակայն նախքան այդ ծանոթագրության թարգմանությանը և մեկնարանությանը դիմելը, հիշենք Սալթ-Նովայի խաղի այդ տունը.

Աշխարումըն վարքն էլի լըլըուլների սիրեկանըն.
Բըլըուլի լեզվով իմ ասում, Տե՛ր, պահե վարքի նրմանըն.
Աշխարումըս Բահի սաղ իս. Սալթ-Նովի զերեզմանըն
Շահ-Աբասի Լալի նրմաս. շահի՛ վրեն գսլուն մրնում է55:

Նույնի վերջին երկտողն ըստ տարբերակի՝

Հենչաճի չըլի գուն սաղ լիս. ջուրն տա՛ն. Սալթ-Նովին.
Շահարազի լալի նրման Շահոն վրեք գալուն մրնում է56:

Այս այս տողերին է կցել Երզնի կրտսեր որդին վրացերեն ծանոթագրությունը, որն այսպես է կարդացվում (և պիտի թարգմանել). Բնագիրը՝ «էս է մուխամբազիա Սալթնովամ իփիքրա, բոմա զալէնի ունդա իմիսի սափլավ զէդ մովիղէս զիդիս զիժինիթա, միսթվիս լուկմա-լուկմաթ զակուծոս. ձալի վիսաց կացորա էխմարաթ, ամիս թանա վաժի-կացես սիկվղիլի»⁵⁷: Բառացի թարգմանությունը՝ «Ա՛յ մուխամբազ է. Սալթ-Նովան կարծեց որ զառնը պիտի նրա գերեզմանի վրա գա մեծ ժխորով. որպեսզի նրան մաս-մաս անի» [հայալ] ո՛վ կարող էր ուժ բանացնել: [Նրեակայելք] այսպիսի տղամարդու մահը»⁵⁸:

Այս ծանոթագրությունը Գ. Ասատուրը բնագրիցսիկ կերպով այսպես էր թարգմանել, որն աղբյուր ծառայեց թյուրիմացություններին: «Այս մուխամբազը Սալթ-Նովան հորինեց, որ Շահը (Աղա-Մահմադ-խանը) պետք է դա

51 Ի. Գրիշաշվիլի, էջ 109, հմմտ. Մ. Հասրաթյան, էջ 104:

52 Լ. Մելիքսեթ-Բեկ, Սալթ-Նովա, էջ 154:

53 Լ. Մելիքսեթ-Բեկ, Սալթ-Նովայի հայերեն խաղերի լրիվ ժողովածուն, 1935, էջ 101:

54 Լ. Մելիքսեթ-Բեկ, Իոնա Խելաշվիլին Հայաստանում և Սալթ-Նովան, էջ 125—126:

55 Գ. Լենյան, Սալթ-Նովա, Երևան, 1932, էջ 138: Մ. Հասրաթյան, Սալթ-Նովա, էջ 69:

56 «Գրական թերթ», 1934, № 27:

57 Լ. Մելիքսեթ-Բեկ, Սալթ-Նովայի հայերեն խաղերի լրիվ ժողովածուն, էջ 101:

58 Լ. Մելիքսեթ-Բեկ, Նոր նյութեր Սալթ-Նովայի առասպելական «նահատակության» շուրջը, «Պրոլետար», 1935, № 189:

մեծ ժխտումով նրա գերեզմանի վրա, այս է պատճառը, որ նրան մաս-մաս արին»⁵⁹։ Ասում ենք բոնադրոսիկ կերպով, որովհետև վրացերեն բնագրում ոչ «շահ» բառն է գործածված և ո՛չ էլ Աղա-Մահմադ-խանի հիշատակությունը կա, որը Ի. Ասատուրն է ավելացրել։ Կասկածելի է նաև «գերեզմանի վրա դաշ» և ապա «մաս-մաս արին» արտահայտությունների մեկնարանությունը։ Չէ՞ որ դեռ մաս-մաս պիտի անեին, իսկ հետո գերեզմանում ամփոփեին. մինչդեռ ծանոթագրության մեջ խոսքը վերաբերում է գերեզմանի վրա դալուն և հետո մաս-մաս անելուն, այսինքն գերեզմանից հանելուն կամ շանսատակ անելուն⁶⁰։ Վերջապես, հարցնելու է, ինչպե՞ս կարող էր երգիչը XVIII դարի 60-ական թվականներին հորինած իր խաղում նախադուշակել 1795 թ. գեղքերի մասին. կոնկրետ որ ասենք՝ թե Պարսից շահը 1795 թվականի սեպտեմբերին (այն էլ ուղիղ սեպտեմբերի 11-ին) դալու է նրան սպանելու (մինչդեռ ծանոթագրության մեջ գերեզմանի վրա դալու մասին է խոսքը), և այն էլ ո՞ր շահը՝ Աղա-Մահմադ-խանը, որը XVIII դարի 60-ական և հետագա թվականներին միանգամայն անծանոթ և անհայտ դեմք էր պատմության ասպարեզում⁶¹։

Թյուրիմացության պատճառը, մեր կարծիքով, այն է, որ Սայաթ-Նովայի խաղում խոսքը ո՛չ թե Պարսից շահին է վերաբերում, այլ դառն Շահրասին, որը այլարանորեն, ինչպես վերև տեսանք, նույն Հերակլ II թագավորն է, որը (Հերակլ II) հիմք է ունեցել զժգո՛հ լինելու Սայաթ-Նովայից և առիթ փնտրելու նրանից վրեժն առնելու։

Անկախ այս բոլորից, Բվան Սեիդովի ծանոթագրությունը արժեքավոր է նրանով, որ վկայում է երգչի «հաղթանդամ» լինելու մասին, որին «մահը» չի խնայել։

Այսպիսով մենք մոտեցանք մի լուրջ հարցի, այն է՝ Սայաթ-Նովայի պատակումը վրաց արքունիքի հետ և արքայի մատնվելը հոգևորականի սրեմով։

Ի՞նչ էր ներկայացնում իրենից վրաց արքունիքը և ինչպիսի՞ն էր Վրաստանի քաղաքական և տնտեսական կացությունը XVIII դարի 60-ական թվականներին, ասել է՝ մինչև Սայաթ-Նովայի արսորը Թրիլիսից, որը տեղի ունեցավ 1765 թվականին։

Այս առթիվ խոսքը տանք Վրաստանի պատմության ձևոնարկին, ուր տրված է Վրաստանի ճշմարտացի վիճակի պատկերը հենց այս դաշին։ Թեյ-մուրադ և Հերակլ (Էրեկլե) Վարքաների՝ թագավորությունը սկսվեց կատաղի ընդհարումով իշխանների հետ։ Քարվլիի իշխանները վախենում էին կենտրոնական իշխանության ուժեղացումից, նրանք նույնիսկ չէին հաշտվում Քարվլիի և Կախեթի միավորման դադափարի հետ։ Իրենց նեղ դասային նպատակների համար մղած պայքարում ուսկիցիոն իշխանները հաճույքով անցնում էին վրաց ժողովրդի բոլոր թշնամիներին՝ զղլրաշների, օսմանցիների, լեղզիների և այլոց կողմը։ Ռեակցիայի կողմնակիցներն ունեին իրենց համախոհներ Թեյմուրազի

59 «Ազգագրական հանդես», X, էջ 100։

60 Հմմտ. երգչի մի այլ խաղում գործածված նախադասությունը՝ «Տեսնողին կու շինիս մաս-մաս» (Ախվերդյան, էջ 86, Հասրաթյան, էջ 57)։

61 Աղա-Մահմադ-խան՝ Կաջարների հարստության (դինաստիայի) հիմնադիրը. թագավորեց 1794—1796 թթ։

և Հերակլի (Էրեկլեի) հակասությունների միջև Մոսկվայի վրացական դպրոցում:

60-ական թվականներից գրությունը հիմնովին փոխվեց: Վրաց իշխանների՝ գրեթե օգնություն ստանալու հույսերը զրկվեցին: քանի որ Քե-րիմ-խանը Հերակլի (Էրեկլեի) կողմնակիցն էր, օսմանյան պետությունն էլ Արևելյան Անդրկովկասի գործերին այլևս չէր խոսնվում, իսկ սահմանակից խաները հնազանդվում էին Հերակլին (Էրեկլեին) և նրա դեմ չէին համարձակվում դուրս գալ:

Այս նոր պայմաններում ուսուցիչներ իշխանները դավադրության—տեոքրի ուղին ընտրեցին: նրանք մտադրվեցին բնաջինջ անել արքային և վերջինիս ամբողջ ընտանիքը: Այս գործի ղեկավարն էր Պատառն, Վախթանգ թագավորի արտամոսնական որդին: Շուտով Պատառնի կացարանը, ոմն Մարկոդաշվիչու սալոնը (բնագրում՝ դարպասը) դավադրության բույնի վերածվեց: 1765 թվականին, երբ դավադիրներն արդեն պատրաստ էին իրենց մտադրությունն ի կատար ածելու, նրանց մասնեց Սամշվիլիցի գյուղացի Գաթունա ջուհակու: Բազմակողմ շտապ կերպով բանտարկել տվեց դավադրության ղեկավարներին⁶²: Նրանց խիստ կերպով պատժեցին: Այս հաղթանակից հետո թագավորն ավելի ևս ուժեղացավ: Հետագայում ուսուցիչները իշխանները թագավորի դեմ տեոքրային շեն փորձելու⁶³:

Հետագրորական է, որ հենց այսպիսի իրադարձության պայմաններում է տեղի ունենում Հովսեփ Էմինի վտարումը Վրաստանից՝ ուր նա եկել էր Հայաստանից Սիմեոն Երևանցի ամենայն հայաց կաթողիկոսի հետ բանակցելուց (1763) հետո⁶⁴ և շրջագայեց Վրաստանում 1763—1765 թթ., որից հետո անսպասելիորեն ստիպված եղավ, Հերակլ 11-ի հրամանով, թողնել Վրաստանի սահմանները:

Դժվար է, անշուշտ, մտածել, որ այս տարիներին Սալաթ-Նովան որևէ կերպ զերծ մնար շփումից թե՛ «Մարկոդաշվիչու սալոնի (դարպասի)» հաճախորդների և թե՛ Հովսեփ Էմինի հետ, ոչը նույնպես քաղաքական ծրագրերի միտումով էր բանակցում Հերակլ 11-ի հետ: Եվ այսպիսի հետևություններ բխում է հենց երգչի խոսքերից: Այսպես, օրինակ, աղբյուրներն մի խաղում երգիչը արտնչում է, որ

Իս վրաց քավաղենու մեջ ՁԻՍԱՆ ԿՅԱՆՔԸՍ ԽԱՇԵՑԻՑԵ:

Իսկ Քվարթալսելի վրացական վանքի կուսակրոն կիսաքարկավաղ (հյուղակոն) Իսնա Խելաշվիչու հետ Գիորգի թագավորն օրոր Հագուատի վա բում գրուցելիս Սալաթ-Նովան ուղղակի նշել է, որ վրաց արքունիքում սուղալար եղած միջոցին, այսինքն մինչև 1765 թվականը, նա ամեն տեղ ընդունված էր

⁶² Սրանց մասին տե՛ս ստորև՝ Ալ. Ջամբակուր-Օրբելիանիի հոշերու:

⁶³ «Վրաստանի պատմություն», դասագիրք, հատ. Ա, Թբիլիսի, 1953, էջ 353—354 (վրացերեն): Նույնը տեսե՛ք «История Грузии. Учебник», Тбилиси, 1960, էջ 170—171:

⁶⁴ А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, Ереван, 1945, էջ 214 և ծան. 1, էջ 214, հիմն. Կ. Գանիելյան, Հայ մեծոքարային գրականության պատմություն, Երևան, 1951, էջ 110:

⁶⁵ Մ. Հասրաթյան, Սալաթ-Նովա, 1945, էջ 148, նույնը, 1959, էջ 210 (մեջբերումների մեջ քնդգծվածը մերն է—Լ. Մ.—Բ.):

«ոչ միայն խաղով, այլև կատակով և նույնիսկ աշխարհիկ (այսինքն, քաղաքական) գործերով»⁶⁶։

Կարելի է արդյոք այստեղից կուսակց, որ Սայաթ-Նովան մասնակրած լիներ Հերակլ II-ի դեմ կադմակերպվող դավադրությանը, կամ կապված լիներ Հովսեփ Էմինի գործակերպի հետ, որի դեմ էր տրամադրված Սիմեոն կաթողիկոսը։ Իհարկե, ոչ։ Ամենամեծ հանցանքը, որ գործած պիտի լիներ պալատական սաղանդարը, դա այն էր, որ նա, չուղենալով ոչ որի մատնել, ժամանակին իրազեկ չէր դարձրել արքային հակապետական խմորումների մասին։ Հետևապես, երգիչը եթե ոչ ուղղակի, գոնե ահուղղակի կերպով դատվել է դավադիրների շարքը։ Այս հանդամանքը չի թաքցնում Սայաթ-Նովան, որն ինքն իրանքներն խաղերից մեկում դիմում է Հերակլին՝ «մեղա»-դալով։

Մեղք գործեցի Բո առաջ, ձեռք մեկնեցի, խաղեցի,
ևս այս լեզվին չեմ դիմանա, սիրտս մսխալի չափ է։

Ինչ նստեմ և ինչպես լաց չլինեմ ո՞ր մեկ դարդի համար.
Ինձնից գատ ԲՍԱՆ ԵԼԻՈՒՍՆ ՈՒՐԻՇ ԷՆ, — ճշմարիտ 167։

Հետևապես, եթե «Մարկոդաշվիլու սալոնի (դարպասի)» մասնակիցներին կամ Հովսեփ Էմինի խմբին (կամ գուցե երկուսին էլ միասին) ի նկատի ունի Սայաթ-Նովան, համեմատյալ դեպս նրա խոստովանքն այն է, որ իրեն չհաշված՝ դադունի խմբի մեջ գործել են 22 հոգի։ Սակայն ուրեք են այդ 22 հոգին։ Արանցից 7-ի անունը, որոնք ծանր պատիժ են կրել Հերակլից, հիշատակված է Հերակլի դստեր՝ Թեկլեի որդի իշխան Ալեքսանդր Վախթանգի Ջամբակուր-Օրբելիանի (1802—1869) հուշատետրում, մանրամասնություններով դատավճռի մասին. «Պատժա արքայազնը Աթաբակի գլխատման թրով. Դավիթ Արդուարեզի որդին նույնպես. Դիմիտրի Ամիրխանյանից խլվեն ձորտերը և կալվածքը. սրա որդուն՝ Ալեքսանդրին՝ կտրվի թիթը, աքցանների մեջ գցվի և օտար երկիր արտաքսվի. էլիսբար Թաթարիշվիլին հրկիզման ենթարկվի. սրա որդու՝ Յասենին՝ աչքը հանվի և մի ձեռք գջվի. Դիմիտրի Ցիցիշվիլուն՝ կտրվի լեզուն»⁶⁸։

Այնպես այս իրադարձությունները պատահականորեն են համընկնում իրար։ Թվում է, որ ոչ ոք միջև սրանից հետո կարելի է պնդել, որ Սայաթ-Նովայի արտաքսումը վրաց արքունիքից հետևանք էր մի ինչ-որ շեղում «սիրամկանի» կամ «վիրավորության» սրբ արքունի սաղանդարը խույլ էր տվել իրեն Հերակլ II արքայի քրոջ՝ Աննա արքայադստեր կամ Անտոն I արքայազնի վրաց կաթողիկոսի նկատմամբ։ Իհարկե, ոչ։

Մինչդեռ մեր տրամադրության տակ եղած վրացական աղբյուրներից պարզվում է, որ Սայաթ-Նովայի արսորը Թրիլիսիից եղել է մի տեսակ «հարկադրված» քայլ։ Հաղպատի թեմի առաջնորդը (անունը հայտնի չէ), որին ենթակա էր Թրիլիսիի հայոց եկեղեցիների մեծ մասը և Սոմխիթի (Բորչալուի)

66 «Կալմասոռ», I, Թրիլիսի, 1936, էջ 226 (վրացերեն)։ Լ. Մեկիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, III, Երևան, 1955, էջ 246—247։

67 Ի. Գրիշաշվիլի, էջ 98, հմմտ. Մ. Հասրաթյան, էջ 113։

68 Իշխ. Ալեքսանդր Ջամբակուր-Օրբելիանի գովածք..., հրատ. Ջ. Ճիճինաձեն, Թրիլիսի, 1879, էջ 113 (վրացերեն)։ Հմմտ. Յակոբ Բալախաշվիլի, Երկու հարց Սայաթ-Նովայի կենսագրությանից, II, Սայաթ-Նովայի վրաց արքունիքից վտարման պատճառը «Չվենի թաղա» [Մեր սերունդը], 1939, № 7, էջ 64 (վրացերեն)։

ու Կախսկի հայությունը, Հերակլ թագավորի առաջարկին՝ հեռացնելու Սա-
յաթ-Նովային Ռրիլիսից, տալով նրան ապրուստի միջոց որևէ տեղ, ոչ մի
կիք չի պահում, բացի նրա՞նից, որ հրգչին, հակառակ նրա կամքի, ձեռնադրի
ծխատեր քահանա Կախ-ավանի հայոց եկեղեցու համար Սահնդիլոյում (Ձա-
րախալայում), հավանական է՝ նույն 1765 թվականին, վերակոչելով Արուժի-
նին տեր-Ստեփանոս (վրացերեն՝ տեր-Ստեփանե կամ տեր-Ստեփանա)⁶⁹:

Այստեղ ավելորդ չէր լինի նշել, որ իր կյանքի և գործունեության մեծ բեկ-
ման թարմ տպավորությամբ տակ պիտի լինի հորինված Սայաթ-Նովայի «Ձեռք
հաշի՛ր խնձանից, տմարդություն չեմ ուզում» վրացերեն խաղը, ուր երգիչը
հավաստիացնում է արքային.

1. Ձեռք ֆաշի՛ր ինձանից, տմարդություն չեմ ուզում,
Այստեղումս փառամություն չեմ ուզում,
Վատ խոսքեր քեզ մոտ ասել չեմ ուզում,
Հավատարիմ եմ քեզ, կեղծավոր լինել չեմ ուզում,
Ես գեղջուկ եմ, քավադություն չեմ ուզում:
2. Արի՛, բասով արյունս մի՛րափիւր,
Առնված եմ քո մեծածախս գնով,
Եկա քեզ մոտ իրանական ձեռերով,
Պանկցիւր ինձ ատասով և խասով,
Սե կարա, սե սեմ չեմ ուզում:
3. Իմ խոսք քեզ հավատարի լինի,
Քո փեշը ձեռքովս բռնելու լինի,
Իմ գլուխը քո ոտի տակ գետին-փռի լինի,
Քո բազր իմ բազրի կողմին լինի,
Մեր մեջ անջրպետ չեմ ուզում⁷⁰:

Որ Սայաթ-Նովայի քահանա ձեռնադրելը մի տեսակ պատիժ կամ հատու-
ցում է եղել նրա կողմից թույլ տված ինչ-որ հանցանքի համար, երևում է և
նրա «Խեղճ իմ դուխս, ինչպես խաթի մեջ ընկար» վրացերեն խաղից, որը նա
արտասանել է Գիորգի թագավորի օրոք, Հաղպատի վանքում, Իոնա կիսասար-
կավաղ Խելաշվիլու ներկայությամբ.

- Ո՛ւմ մեղադրեմ, առդոմ ումնի՛ց այս եղավ,
Այս բաներն իմ խելիցն է, որ եղավ,
Ինչ որ եղավ, ակամայից հո եղավ,
Կարծեմ, որ իմ ֆամբստ գլխից այս եղավ,
Այս վիճակն առաջնորդից ինձ եղավ⁷¹:
Ինչ որ գլխիս եկավ, տեղին է, բոլոր իմ խելիցն է, որ եղավ⁷²:

Այստեղ կարևոր է նշել, որ այս խաղի տարբերակին, որը եղել է Թեյմու-
րազ արքայազնի ձեռքին (Տ հավաքածուի N՝ 3686), վերջինս կցել է ծանոթա-
դրություն այսպիսի բովանդակությամբ. «Սա Սավաթնուդի ասած մուխամբուլն

69 Տե՛ս մեր՝ Սայաթ-Նովա, 1930, էջ 81—92, 142, Սայաթ-Նովայի հայերեն խաղերի լրիվ
ժողովածու, 1935, էջ 19—21:

70 Ի. Գրիշաշվիլի, էջ 116, հմմտ. Մ. Հասրաթյան, էջ 128:

71 «Կամասորա», I, 226 (վրացերեն) և Լ. Մելիքոբ-Քեկ, Վրաց աղբյուրները Հա-
յաստանի և հայերի մասին, 111, էջ 246—247:

72 Լ. Մելիքոբ-Քեկ, Սայաթ-Նովա, 1930, էջ 154:

1. նա (Սավլաթնումը) նախ հայ տերտեր էր, ապա երբ վանական դարձավ, այն ժամանակ ասաց [այս]»⁷³:

Այս ծանոթագրությունը համապատասխանում է այն իրողության, որ Սայաթ-Նովան հոգևորականի սքեմ է հադել նախքան կնոջ մահը (1768), իսկ կնոջ մահից հետո, ըստ մեր կուսման, ավելի ուշ, ընդունել է կուսակրոնություն և, միաժամանակ, վեղար կրելու իրավունք:

Այժմ մի փոքր շեղվենք և քննենք մի հարց, որը կապվում է Սայաթ-Նովայի կնոջ մահվան հետ (1768): Սայաթ-Նովայի երեխաները, որոնք իրենց հոր արտորավայր Կախ-ավան մեկնելուց հետո իրենց մոր հետ միասին Թրիլիսիումն էին մնացել, մորը կորցնելուց հետո, անկասկած, կարոտ էին հոր խնամքի: Այս հանդամանքն ի նկատի առնելով, Հերակլ II-ը, իհարկե, չէր կարող մնալ անդուլ և շներել երբեմնի պալատական ստղանդարին վերագրվող «հանցանքը»: Եվ վերջինս վերադառնում է Թրիլիսի, հավանական է, շարունակելու քահանայությունը Թրիլիսիի եկեղեցիներից մեկում: Անկասկած, այս ժամանակի լինիքն է կրում Սայաթ-Նովայի վրացերեն խաղը, նվերված Հերակլ II-ին, որը մենք բերում ենք ամբողջությամբ՝ մեր բառացի թարգմանությամբ.

1. Արդար դատե, չէ՞ որ քաղափու Եօ դու,
Ողջ Վրաստանի սիրելին Ես դու.
Ոմանք ինձ ասում են՝ մաշված շուր Ես դու.
Ոմանք էլ ավելացնում են՝ հոտած ջրհուր Ես դու.
Կարող ես խոռվել հետս եամ խնդալ:
2. ՉՈՒՆԻՄ Ո՛Չ ԿՈՂԱԿԻՑ Ե ո՛չ էլ խնամի.
Ես գեղջուկ եմ՝ գլխովին գետնին տալու.
Մեջլիսը հորաճուր աղմուկի կարուտ է.
Ում ստաշես էլ մաղեցի սրտիս զամբյուղը,
Բոլորն ասացին՝ անօգուտ լեռ Ես դու:
3. Արեւայից ներկայացա հույժ գրկլսված,
Սագս ձեռքս էր բռնված-պատրաստված,
Ինձ ետ մղեցին խաղալիքի սլես.
Երեւել չլսելի Ես այն «խորքուխ»-ն⁷⁴,
Խե՛ղ՜ զնա՛, ասացին, կեղտոտ զորդ Ես դու:
4. Ասված է՝ սարբ սարին կղիփչի միանգամ,
Աստծո կամքն է ողորմություն շնորհելը.
Խո՛ղ՜ քո ձեռով լինի իմ մատնությունը.
Երեւել չվոնդելու, այլ մի լավ դեմսելու.
Չէ՞ որ իմ հոգևոր ծնողն Ես դու:
5. Թեկուղ փշրեն ու ջարդեն կողբերս,
Ես կենդանի չեմ հեռանա բեզեից.
Երե Գուրը ինձ չի ոչնչացնի, ծովը կզցեմ ինձ խեղդվելու.
Սայաթ-Նովա, լեզվովդ կրկնապատկեցիր քո դարդերը.
Հապա լեզվի ԲնԳՈՒՆԵՆԼՈՒ ՀԱՄԼԱՐ պատրաստ կա՛ց⁷⁵:

⁷³ Ի. Գրիշաշվիլի, էջ 80, ծան. 1: Լ. Մելիքսեթ-Բեկ, Սայաթ-Նովա, 1936, էջ 61:

⁷⁴ Այս արտահայտության մասին տե՛ս ստորև:

⁷⁵ Ի. Գրիշաշվիլի, էջ 123, հմմտ. Մ. Հասրաթյան, էջ 127 (մեջբերումի մեջ բնագծումը մերն է.—Լ. Մ.—Բ.): Այս խաղին ձայնակցում է «Աշխարհմեն բեղարիլ իմ» հայերեն խաղի երրորդ տունը (հմմտ. Մ. Հասրաթյան, էջ 89):

էլ աղալար, հուրմի-հաբիմ, սուշրս ի՛նչ էլ ասա՛ ինձի.
Վուր հաբցրիլ իմ չուղեցած սիվ ու սուր լիրասը ինձի.
ԽԸՄԵՐԵՐԵՑԻՐ ԱՆՄԵՂ ՏԻՂԸՆ ԷՍ ԱՂՈՒԻ ԹԱՍԸՆ ԻՆՉԻ...

Այս խաղում Սայաթ-Նովան ակնարկում է, որ այրիացել է, այսինքն դարձել է «շուշտակ»⁷⁶, որ պատրաստ պիտի լինի «լեղի ընդունելու», այսինքն աշխարհից հրաժարվելու, առնելով վեղար, նշանակում է՝ դառնալ վանական կուսակրոն քահանա (արևդա)։

Նույնն արտահայտված է և «Ստեփաննե-մկերվալի»-ի խաղում, ուր, ի միջի այլոց, կարդում ենք․

Վա՛յ, վա՛յ, ինչ դժվար է եղել ԱՅՐԻՈՒԹՅԱՆ ԳԱՐԳԸ,
Զվարճությունից զուրկ, երկու գրոշի բաժին դարձած⁷⁷։

Կուսակրոնությունն ընդունելուց հետո իր վիճակի մասին է, որ Սայաթ-Նովան ասում է․

Իս բրինձ էի, գարի լինելն ինչի՞ս էր․
Բազե չի, ուրու լինելն ինչի՞ս էր․
Աշխարհիկիս տեւերությունն ինչի՞ս էր․
Ինձ վանական ձեռնադրվելն ինչի՞ս էր⁷⁸։

Այլև՝

Իբե ինձ իմ առաջնորդը փրկե՜ր⁷⁹, այն աշխարհականությունը
Այս կուսակրոնությունից զերազասլի էր⁸⁰։

Համեմատաբար ավելի հետաքրքիր է Սայաթ-Նովայի «խոստովանքը» Խոնա-Խելաշվիլուն, Հաղպատի վանքում, թե ինչպես նրա օծման ժամանակ, այսինքն՝ 1765 թվականին, նրա սաղի «լարերը ծոցումն էին մնացել և միաժամանակ նրանք ևս օծվել էին, և այդ օծված լարերով է, որ նա արդ նվագում է»⁸¹։

* * *

Մի բանի խոսք Սայաթ-Նովայի վրացերեն խաղերի առանձնահատկությունների մասին՝ գրականագիտության տեսակետից։

Այստեղ նախ անհրաժեշտ է արձանագրել այն փաստը, որ Սայաթ-Նովան վրացերեն խաղերում ևս, ինչպես Հայերենում և ադրբեջաներենում, լայն կերպով օգտագործում է ժողովրդական բանահյուսության, նույնպես և արևելյան ժողովուրդների կլասիկ գրականության փոհարները։ Այսպիսիք են Ռոստոմ և Զալի, Լեյլի և Մեջլումի, Փահրադ և Շիրինի վեպերը, Պղնձե քաղաքի և Ռաշի ասմունքները և այլն⁸²։

Սայաթ-Նովան ծանոթություն է ցուցաբերում նաև Դավիթ Սասունցու վեպի հետ, երբ կրկնում է Մսրա-Մելիքի նեղն ընկած դեպքի պատմը։ Այսպես, Երզնիչը դիմում է Հերակլ արքային հետևյալ խոսքերով։

76 Այս արտահայտության մասին տե՛ս Հր. Առաքյան, Հայերեն գաղափարական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 842ր։ Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, 111, էջ 537։ Լ. Մելիքսեթ-Քեկ, Սայաթ-Նովա, էջ 81։

77 Լ. Մելիքսեթ-Քեկ, Նշվ. աշխ., էջ 157։

78 «Կարմասորա», 1, 226։ Լ. Մելիքսեթ-Քեկ, Վրաց աղբյուրները, 111, էջ 247։

79 Այստեղ ակնարկ կա այն մասին, որ Հաղպատի առաջնորդն ի վիճակի չի եղել բարեխոսելու Սայաթ-Նովայի օգտին Հերակլ 11-ի առաջ, որտեղից էլ երգչի մեջ ստեղծվել է մի տեսակ դժգոհություն հայ վերնախավի նկատմամբ, որը Պ. Իսսելիանին ուղղվել է (սրա մասին տե՛ս ստորև)։

80 «Կարմասորա», 1, 227։ Լ. Մելիքսեթ-Քեկ, նույն տեղում։

81 «Կարմասորա», նույն տեղում։ Լ. Մելիքսեթ-Քեկ, նույն տեղում, էջ 248։

82 Ի. Գրիշաշվիլի, էջ 99—102, 104, 108, 109, 110, 112, 113, 119, հմտ. Մ. Հասարաթյան, էջ 93, 95, 99, 100, 104, 108, 119, 121, Լեոնիձե, էջ 13։

Ով գալիս է, բեզ ներկայանում, խելին խել էն ավելացնում.
 Սրտի միջով նետ են բաշում. վրին [ևս] րուր են դնում.
 Կամ կիշրվի, կամ կիթի, նավի պես ծով են դցում.
 Կամ գցում են փոսի մեջը, վերեից ջրագացի ֆար են դնում,
 Իջնողը էլ չի դուրս գալ ջրհոր են ասում,—նշմարիտ է»⁸³:

Վրացերեն խաղերում, ինչպես և հայերեն խաղերից մեկում, Սայաթ-Նովան դրսևորում է իր ծանոթությունը «Թովուզի թախտ»-ի վերաբերյալ զրույցի հետ: Այսպես, օրինակ, մի խաղում երգիչը նշում է, որ «Հնդկաց թագավորի թախտը հին դիրա-դարով [է] սարքած»⁸⁴: Մի այլ առթիվ էլ նա ասում է. «Թովուզի թախտը հնդկաց թագավորի կառուցած է»⁸⁵:

«Թովուզի թախտի» հիշատակությունը հայերեն խաղերից մեկում, որը մանրամասն քննության առարկա է դարձած Բ. Ախվերդյանի կողմից⁸⁶, ինչպես հայտնի է, ոմանք օգտագործեցին ապացուցելու համար այն թեզը, որ Սայաթ-Նովան իրր թե տեսել է այդ դահլիճ իր դեսպան եղած միջոցին Հնդկաստանում, ոմանք էլ ապացուցելու նրա մասնակցությունը՝ իրր երիտասարդ շարքային զինվորի՝ Հերակլ II-ի զորքերում Նադիր-շահի արշավանքի միջոցին դեպի Հնդկաստան: Նույնիսկ հայատառ թուրքերենով գրված՝ այսպես կոչված «Պատմություն Թահմազ դուլու» երկը, որը հայտնի է իրր «Թամբուրչի Քյուչուք Արուսին» հորինվածք, ոմանք փորձեցին վերագրել Արուսին Սայաթ-Նովային: Սակայն այժմ վերջնականապես պարզված է, որ Սայաթ-Նովան ո՛չ դեսպան է եղել որևէ տեղ, ո՛չ էլ մասնակցել Նադիր-շահի արշավանքին դեպի Հնդկաստան, չետևապես նրա հայերեն և վրացերեն խաղերում «Թովուզի թախտի» մասին պատկերացումը հետևանք է ո՛չ թե անձամբ տեսածի, այլ բանավոր զրույցի: Իսկ «Պատմություն Թահմազ դուլու» կոչված հայատառ թուրքերեն երկը ո՛չ թե Արուսին Սայաթ-Նովայինն է, այլ թամբուրչի Քյուչուք Արուսինի, որը այն գրի է առել՝ մասնակցելով օսմանյան կայսրության դեսպանությանը Մուստաֆա-փաշայի ղեկավարությամբ դեպի Պարսկա-Հնդկաստան 1735—1740 թթ., տալով իր պատմության մեջ, ի միջի այլոց, «Թովուզի թախտի» ամենամանրամասն նկարագրությունը⁸⁷:

⁸³ Ի. Գրիշաշվիլի, էջ 98, հմմտ. Մ. Հասրաբյան, էջ 118: Նաև՝ Լ. Մելիք-Բեկ, Սայաթ-Նովայի ստեղծագործության գրական-ժողովրդական աղբյուրները, Երևանի ժողովրդական հրատ. Թրիլիսի պետական համալսարանի, 1, Թրիլիսի, 1935, էջ 232—256 (վրացերեն), նույնի՝ Սայաթ-Նովայի հայերեն խաղերի լրիվ ժողովածուն, Թրիլիսի, 1935, էջ 15—34, Լեոնիդ Է, էջ 13:

⁸⁴ Ի. Գրիշաշվիլի, էջ 118, հմմտ. Մ. Հասրաբյան, էջ 103:

⁸⁵ Ի. Գրիշաշվիլի, էջ 100, հմմտ. Մ. Հասրաբյան, էջ 106:

⁸⁶ Գ. Ախվերդյան, էջ 103:

⁸⁷ Տե՛ս այդ խնդրի հատուկ գրականությունը. Գահմազ Գուլու խանըն Թեարիթի, Վենետիկ, 1800, էջ 56—59 (հայատառ թուրքերեն). նույնը հայերեն թարգմանությամբ՝ [Մ. Խորխո-րունով՝ «Քյուչուք Արուսին. Պատմություն Թահմազ դուլու», «Գիտական նյութերի ժողովածու» [«Բաների Մատենադարանի»], 1, Երևան, 1941, էջ 118 (բնույթը Մատենադարանի № 2722 ձեռագրի). Քրանսերեն թարգմանությամբ՝ Dubéau. L. Univers pittoresque. La Perse. Paris, 1841, էջ 363, «Journal de Thambourti Aroutine sur conquete de l'Inde par Nader-schah (Tahmas Koulu schan) 1735—1740. Traduit de l'original en langue Turque, écrit avec les caracteres Armentien, par Jacoub Artin Pacha. „Bulletin de l'Institut Egyptien“, cinquieme serie, tome VIII, premier fascicule, annee 1914. Le Caire, 1914, էջ 208—210: Արմենակ Մարգարյան, Նոր Զուղայեցի վաճառականի մրանուն հայկական երկու մետաղներու առթիվ, «Նոր Անահիտ», 1929, № 1, էջ 63ր, ծան. 3: Լ. Մելիք-Բեկ, Սայաթ-Նովա, 1930, էջ 125—126 (վրացերեն):

Հետևապես թյուրիմացությունը զալիս է նրանից, որ Սայաթ-Նովան իր հայտնի աղբյուրներին խաղում նշել է, իբրև թե «տառնինը տարեկան հասակում» նա «ման է եկել Հարաշ-Հնդկաստան»⁸⁸, որը զարմանալի կերպով զուգահեռում է թամբուրչի Քյուչուք Արուսիկի ճանապարհորդությանը Հնդկաստան 1735—1740 թթ.:

Նշանակալից է Սայաթ-Նովայի փորձը երկրիս մայր գետերի սիմվոլներ ստեղծելու գծով, որի բնագավառում նա թերևս առաջինն է անդրկովկասյան ժողովուրդների գեղարվեստական գրականության մեջ: Ասում ենք առաջինն է անդրկովկասյան ժողովուրդների գրականության մեջ այն իմաստով, որ Սայաթ-Նովայի կերպարները այս ուղղությամբ կանխում են, մի կողմից, Քուի կերպարին, որը նկատվում է հ. Արուսիկի (1836) և Ն. Բարաթաշվիլու (1837) մոտ, մյուս կողմից, Նրասիի և Վոլգայի միասնամանր կասպից ծովի ջրերին հ. Արուսիկի մոտ (1840) և, վերջապես, Քուի և Նրասիի (Արաքսի) միասնամանր իրար հետ՝ Գամառ-Քաթիպայի (1852) և հյուսիսափայտկան Ռուբեն Հասան-Ջալալյանի (1840—1918), նաև մեր օրոք՝ Ի. Գրիշաշվիլու (1945) մոտ: Նմանապես Սայաթ-Նովան կանխում է Ա. Պուշկինի (1829) ստեղծած կերպարին, որով «նազալ Դոնին» բարեկերպ են հղում «Արաքսն ու Եփրատը», իսկ Դոնի ձիերը վայելում են «Արվաշայի (այսինքն Ախուրյանի) ջրերը»:
«Արդար դասե՛, չէ՛ որ թագավոր ես դու» 1768 թ. հետո հորինած իր վրացերեն խաղի վերջին տան մեջ Սայաթ-Նովան, դիմելով Հերակլ II թագավորին, ասում է.

Ես կենդանի չեմ հեռանա Բեղանից.
Նրե Քոնիկ ինձ չի ոչնչացնի, ծովը կձգեմ ինձ խեղդվելու⁸⁹.

«Ծովն աստղալուսով ինչպե՛ս կցամքի» վրացերեն խաղում, որը գրված պիտի լինի 1751 թ. մոտերքում, երգիչը գրում է.

Սովն աստղալուսով ինչպե՛ս կցամքի.
Քոնիկ մաղով ինչպե՛ս կչափվի⁹⁰:

Իսկ «Քուռ պղտորված Արաքսի ջրով» խաղը հենց այդպես էլ սկսվում է.

Դու՛ Քոնիկ պղտորված Արաքսի ջրով.
Ես չեմ դիմանա Բեգ, Բահանիկ⁹¹:

Սայաթ-Նովան թերևս առաջինն էր ու միակը ուշ միջնադարի ֆեոդալական վրաստանում, որը վերակենդանացրեց Շոթա Ռուսթավելու դործածած «քարթուլի» արտահայտությունն իր սպեցիֆիկ իմաստով⁹², որը նշանակում է բարձր ոճով ասմունք և ոչ թե բացառի իմաստով՝ «վրացերեն»-ը: Օրինակ, մի

88 Հմմտ. Մ. Հասրաթյան, էջ 266:

89 Ի. Գրիշաշվիլի, էջ 123, հմմտ. Մ. Հասրաթյան, էջ 127:

90 Նույն տեղում, էջ 97, նույն, էջ 115, հմմտ. Գ. Աստվածատրյան, «Ազգ. հանդես», X, 1903, էջ 111:

91 Ի. Գրիշաշվիլի, էջ 99, հմմտ. Մ. Հասրաթյան, էջ 121:

92 Շոթա Ռուսթավելի, Վազրենավորը, Նախերգանք, տներ 9 և 15:

տեղ Սայաթ-Նովան ասում է. «էրթի սիտղվա ֆարբուի մարվս»⁹³, այսինքն՝ «Մի խոսք ունիմ ֆարբուի», այլապես ասած՝ «Մի խոսք ունիմ բարձր ոնով ասելու»⁹⁴։ Մի այլ տեղ՝ «Նէտամց ար շէմէտղո մէ իս ֆարբուի»⁹⁵, այսինքն՝ «երանի չնկատեի ես այն ֆարբուին», այլապես ասած՝ «երանի չնկատեի ես այն բարձր ոնով ասմունքը»⁹⁶։

Հետևապես, «քարթուլի»-ն տվյալ դեպքերում դործածված է Սայաթ-Նովայի կողմից ո՛չ թե սովորական (բառացի) «վրացերեն»-ի իմաստով, այլ Շ. Ռուսթավելու հասկացողությամբ, իբրև բարձր ոնի ասմունք⁹⁷, որը համընկնում է նահապետ Քուչակի «հայրեն»-ին («հայրենի կարգալ»)՝⁹⁸։ Այս առումով «քարթուլի» բառը դործածվում է «Վազրենավոր»-ի վաղեմի բառարաններից մեկում⁹⁹ և Մխիթար Դոշի «Հայոց դատաստանագրքի» հին վրացերեն թարգմանության մեջ¹⁰⁰։

Սայաթ-Նովայի կյանքի և դործունեության երկրորդ շրջանի կարևոր դրվագներից մեկն է նրա պաշտոնեությունը Հաղպատի վանքում ու նրա առաջնորդանիստ տաճարում Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում, այն է՝ այժմյան Ս. Գևորգ եկեղեցում։ Վրացերեն լեզվով մեզ հասած փաստաթղթերից, որոնք վերաբերում են այս շրջանին, կարևոր են նրանք, որոնք կցված են Սերոբ դրչի (Սերովրե Պատկանյանի) «Թբիլիսիի ավերման պատմությունը» պարունակող դավթարին, նվիրված «Աղա-Մահմադ-խանի ձեռամբ... վասն եկեղեցական արծաթի և անոթի չցույց տալու համար» նահատակված «Հաղպատի դործակալ» տեր-Մխիթարի հիշատակին։ Այդ փաստաթղթերն են Հաղպատի թեմի հանգուցյալ առաջնորդ Դավիթ արքեպիսկոպոս Թավրիզյանից մնացած գույքի՝ ամանեղենի, հաղուտեղենի և զրքերի 1796, 1797 և 1798 թվակիր ցուցակները, որ մենք ենք հրատարակել¹⁰¹։

«Սայաթ-Նովու վանական կյանքի վրա չունիմ ոչինչ տեղեկություն», քանի որ «Հաղպատում մի ծեր էլ չկա, որն որ իմանում էլի զոնե մեկ ավանդություն էս աննշան կրոնավորի վրա», — տրտնջում է Դ. Ախվերդյանը 1852 թ. Ապա, բերելով այն վրույցը, որը վերաբերում է Սայաթ-Նովայի վանքից փախչելուն

93 Ի. Գրիշաշվիլի, էջ 111։

94 Ըստ Մ. Հասրաթյանի՝ «Մե ռուսալիք գուգիմ ասի» (էջ 111)։

95 Ի. Գրիշաշվիլի, էջ 123, հմմտ. Մ. Հասրաթյան, էջ 127։

96 Ըստ Մ. Հասրաթյանի՝ «էրնեկ չիգուց չիմանայի յիս նորանց» (էջ 127)։

97 Լ. Մելիքսեթ-Քեկ, Գիտությունների Շոթա Ռուսթավելու և նրա «Վազրենավորը» պոեմի մասին, «Արմֆանի տեղեկագիր», 1941, N 1, էջ 81—83, հմմտ. Վ. Բերիձե, Ռուսթավելու անվան լայնուղի, Թբիլիսի, 1961, էջ 282 (վրացերեն)։

98 Լ. Մելիքսեթ-Քեկ, Հայ հին գրականության պատմություն, Թբիլիսի, 1941, էջ 180 (վրացերեն)։

99 Լ. Մելիքսեթ-Քեկ, Վազրենավորի Ղարաբաղյան տարբերակը, «Թբիլիսիի պետական համալսարանի աշխատություններ», V, 1936, էջ 220 (վրացերեն)։

100 Լ. Մելիքսեթ-Քեկ, Հայոց դատաստանագրքի, Թբիլիսի, 1927, էջ 96 (վրացերեն)։

101 Լ. Մելիքսեթ-Քեկ, Վրաց ազդյունները Հայաստանի և հայերի մասին, III, Երևան, 1955, էջ 182—186, հմմտ. «Պրոլետար», 1935, N 189, նաև՝ Անսոն I-ի Հակաճառության լատիներեն-հայերեն ազդյունները, «Թբիլիսիի պետական համալսարանի աշխատություններ» XXX—XXX-B, 1947, էջ 103—106 (վրացերեն)։

ու Թիֆլիս գալուն մի «օտարական աշուղի» հետ մրցելու նպատակով, նույն Գ. Ախվերդյանն ավելացնում է. «Բայց էս դուրսին ու սրան նման զվարճ Թիֆլիսեցվոց մտաց ցնորքն իսկի հավատարու բան չեն, էնդուր որ մեր մեզոք Ձեացյալ կրոնավորն անց կուլեր կացնում կյանքն իր վաղեմի մեղքերու ազդեցությամբ ու պաս պահելով քավելումն»¹⁰²։

Այսպիսի պայմաններում պարզ պետք է լինի, թե որքան արժեքավոր է վրացական աղբյուրը, զրի առաված 1801 թ. իրադարձություններից հետո և, համեմատյան դեպ, շատ առաջ, քան լույս կոեսներ Դ. Ախվերդյանի «Մայաթ-նովա»-ն (1852)։ Մենք ի սկստի ունենք Հովհան արքայազն Բագրատիոնի «Կալմասորա»-ն («Կալմասորա»-ն հայերեն լատերից է կալմված՝ «կալ» + «մասունք») ¹⁰³։ որտեղ արձանագրված է վրացական Քվարթախեվիի վանքի կուսակրան կիսասարկավազ Իոնա խելաշվիլու հանդիպումը Մայաթ-նովայի հետ Հաղպատում, Հերակլ II թագավորի մահից հետո և Գիորգի XII-ի թագավորության օրոք¹⁰⁴։

Ըստ այս դրվածքի, Իոնան ճանապարհորդել է Հաղպատն 2 անգամ. նախ 1798—1800 թթ. միջոցին՝ ղեկի Շորազետի ուխտատեղիները, իսկ երկրորդ անգամ՝ 1801 թ. դարնանը (հետևապես, նախքան Վրաստանի միանալը Ռուսաստանին), ղեկի էջմիածին և Առաջին ճանապարհորդությունը տեղի է ունեցել հետևյալ երթուղով. Թիֆլիս—Սաղախլո—Ախթալա—Սանահին—Հաղպատ և ետ։ Սանահինում Իոնան իջևանել և գիշերել է տեղիս իշխան և պղնձահանքերի մինրաշ (վերահսկող) Սողոմոն Արղուբյանի (Արղուբաշվիլու) տանը, ուր և հյուրասիրվել է Ընթրիքով։ Ընթրիքի միջոցին տեղի է ունեցել զրույց Հերակլ II արքայի գործունեության և առհասարակ Մխարդրձեղների (Երկայնարագուկ-Արղուբյանների) մասին, երբ հիշվել է, ի միջի այլոց, և Հովսեփ վարդապետի, այսինքն՝ ռուսահայոց առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղուբյանի անունը։ Զրույցի ժամանակ Սողոմոնը, ի միջի այլոց, նշում է, որ Հերակլ (Էրեկլե) թագավորը «ողորմած էր» ղեկի իր հորեղբայր Հովսեփ վարդապետը Իոնան, համաձայնվելով Սողոմոնի հետ, ավելացնում է. «Ոչ միայն Հովսեփ վարդապետը, այլև քո հորեղբայր Մովսեսը և քո հայր Բեթանը հավատարմության և ծառայության շնորհիվ միշտ տեղ ունեին [Հերակլ] թագավորի մոտ, իսկ թե ինչպես է Գիորգի թագավորը ողորմած ղեկի քեզ, բոլորը գիտեմ այդ» և այլն։ Նշանակում է, որ Իոնա խելաշվիլու հանդիպումը Սողոմոն Արղուբյանի հետ տեղի է ունեցել Հերակլ II արքայի մահից հետո, արքայի, որը «ողորմած էր» ղեկի Արղուբյանները, և հենց Գիորգի ԺԲ (ԺԳ)-ի թագավորության օրոք, որը «ողորմած է» ղեկի նույն ազդատուհմը։

Հաջորդ օրը, ղիտելով Սանահինի հնությունները, որից հիացած էր, և հրաժեշտ տալով Սողոմոնին, Իոնան անցնում է Հաղպատ, որը նույնպես ղիտում է և նույնպես սքանչանում։ Ապա տեղի է ունենում հետևյալ ղեկը, որը ման-

¹⁰² Գ. Ախվերդյան, Մայաթ-նովա, էջ ԺԼ—ԺԲ։

¹⁰³ Գրականության այս երկի մասին տե՛ս Լ. Մելիքսեթ-Քեկ, Վրաց աղբյուրները, III, էջ 238—240։

¹⁰⁴ Հատկապես սրա մասին տե՛ս Գ. Լեոնիձե, Մզոսանի Սաաթնավա, Թբիլիսի, 1930, էջ 28—31, Ե. Ջավախիշվիլի, Կալմասորա, հետևյալ ինտիտուտի հրատ., Թբիլիսի, 1933, էջ 248—252, Լ. Մելիքսեթ-Քեկ, Իոնա խելաշվիլին Հաղպատում և Մայաթ-նովան, Վրաստանի պետ. թանգարանի բաները, IX, Թբիլիսի, 1936, էջ 132—135, նույնի Վրաց աղբյուրները, III, 1955, էջ 243—249։

րամասն նկարագրված է «Վալմաստրա»-յում այսպես (տալիս ենք մեր թարգմանությամբ)։ «Այդ պահին ոմն հայ վանական հրավիրեց Իոնային իր խուցը, և սա հետևեց նրան։ Հենց որ վարդապետը Իոնային հասցրեց իր խուցը, ողջունեց ու ճանապարհորդության հանդամանքների մասին հարցուփորձ արավ։ Իոնան ամեն ինչ պատմեց, և ապա նստեցին, մի փոքր զրուցեցին և վարդապետը մատուցեց Իոնային նախաճաշիկ. և սկսեցին վայելել, և սրա հետ լավ գինի էլ մատուցեց Իոնային և ինքն էլ լավ կոնծեց։ Ապա վարդապետը վեր յերևեց սաղը (չոնդուրը) և սկսեց նվագել, ապա սկսեց երգել, այսպես [ասելով]։

1. Խեղճ իմ գրյուխ, ինչպես խարի մեջ բեկար,
Ողջ աշխարհում ծիծաղելի բան դարձար.
Ուր էլ փախար, սալբաբեցիր՝ վալը բեկար.
Վերջն էլ, հապա, դու բեղովար մարդ դարձար:
Ո՛ւմ մեղադրեմ, արդյո՞ք ո՛ւմնից այս եղավ.
Այս բաներն իմ խելիցն է, որ եղավ¹⁰⁵:

2. Կարձես էի աշխարհումս ևս զոված,
Գավարի պես ոսկե տուփում ամփոփված.
Ի՞նչ պատահեց այս իմ գրյուխն անիծված.
Ինչ որ եղավ, ակամայից հո եղավ:
Ո՛ւմ մեղադրեմ, արդյո՞ք ո՛ւմնից այս եղավ.
Այս բաներն իմ խելիցն է, որ եղավ:

3. Արհեսներից մեջլիսներում հրավիրված,
Իշխաններից պատված, հարգված, մեծարված,
Այժմ անա բուրձր հագին սեացած:
Այս վիճակը առաջնորդից ինձ եղավ:
Ո՛ւմ մեղադրեմ, արդյո՞ք ո՛ւմնից այս եղավ
Այս բաներն իմ խելիցն է, որ եղավ:

4. Ես բռնեմ էի, գարի լինելն ինչի՞ս էր.
Բազե չի, ուրուր լինելն ինչի՞ս էր.
Աշխարհիկիս տերտերությունն ինչի՞ս էր.
Ինձ վանական սեմավորելն ինչի՞ս էր:
Կարձեմ, որ իմ քամբախտ գրյուխն այս եղավ:
Ո՛ւմ մեղադրեմ, արդյո՞ք ո՛ւմնից այս եղավ
Այս բաներն իմ խելիցն է, որ եղավ¹⁰⁶:

Իոնա [կիսա]սարկավաղը ապշած նայում էր և ասաց. «Վա՛յ, ողորմելին ինչպես է ողբում աշխարհից հեռանալը». և ի վերջո ասաց. «Հա՛յր [սուրբ], կուսակրոն (մոնոդոն) եք, դեպի ձախ չթևալեք»:

Վարդապետը.— Երբ ես քո հասակումն էի, թե՛ դեպի ձախ էի զլորվում և թե՛ դեպի աջ:

Իոնան.— Վա՛յ իմ գրյուխն, Գրա համար ե՛ր ողբում:

¹⁰⁵ Այս տողերը նույնությամբ առկա են Ստեփանե մկերձալիի խաղերից մեկում՝ «Խնձ որ անես, տեղին է, իմ խելիցն է, որ եղավ» (Ն. Մ և լի բ ս ե թ-Բ և կ, Սայաթ-Նովա, էջ 154):

¹⁰⁶ 1. Մ և լի բ ս ե թ-Բ և կ, Ալմանախ, Թրիլիսի, 1948, էջ 199: Նույնի՝ Վրաց աղբյուրներ, 111, 1955, էջ 246—247: Այս բանաստեղծությունը թարգմանել են նաև Դ. Մուրադյանը (տե՛ս Գ. Լ և ո ն յ ա ն, Սայաթ-Նովա, 1932, էջ 33—34), Հովհ. Կարայանը (տե՛ս «Սովետական Վրաստան», 1945, № 74 և «Հայրենական» բանաստեղծությունների ժողովածուն, Թրիլիսի, 1948, էջ 58), Մ. Հասրաթյանը (տե՛ս «Սայաթ-Նովա», 1959, էջ 129—130: Նույնը՝ «Վրաց գրականությունը քննարկողներ», Երևան, 1961, էջ 105—106):

Վարդապետը.— Սրա համար էլ եմ ողորում և քեզ համար էլ, որ երիտասարդ մարդ վանական ևս դարձել է։

Խոնան.— Ավելի լավ է, որ մարդն երիտասարդ հասակից ընտելանա լավին։ Դու էլ որ երիտասարդ հասակից վանական դառնայիր, այժմ այսպիսի կսկիծի մեջ չէիր լինի։

Վարդապետը.— Եթե իմ առաջնորդը (վարդապետը) փրկեր, այն աշխարհականությունն այս կուսակրոնությունից զերազասելի էր։

Խոնան.— Հրամայե՛ք, ո՞վ եք գուրդ։

Վարդապետը.— Ես խղճուկ Սաաթլաման եմ, թե որ լսել եք։

Խոնան.— Այո՛, լսել եմ ձեր գովքը իրեն սաղանդարի՝ քեֆերում. արդ հրամայե՛ք, ինչպե՞ս պատահեց այս։

Սաաթլաման.— Ես լավ նվագում էի սազով (չոնգուրով) և, միաժամանակ, պարսկական ձայնի վերածեցի վրացական խաղերը։ Այն զեռեա ընդունված չէր։ Եվ երբ Հերակլ (Էրեկլ) թագավորը խնձույթ սարքեց և մեզ՝ նվագողներին՝ տարան նրա մոտ, այն ժամանակ ևս պարսկական նվագը վրացերեն երգեցի։ Արքան (բատոնը) շատ հավանեց և խալաթ պարգևեց ինձ։ Ապա շատ ուրիշներն էլ [նույնպես] ասին և ինձ նմանվեցին։ Ես ամեն տեղ ընդունված էի ոչ միայն երգով, կատակով ևս և նույնիսկ աշխարհիկ գործերով, այնպես որ շատ բանով էի զբաղված։ Ապա կուսակրոնություն ընդունեցի, և ահա այստեղ եմ, և այս կուսակրոնության միջոցին հորինած բանաստեղծություն¹⁰⁷ երգելով լսելի դարձրի ձեզ։

Խոնան.— Քանի որ աշխարհից հեռացար, նվագելուց ևս ձեռք պիտի քաշեիր։

Սաաթլաման.— Իմ առաջնորդն (վարդապետն) էր, որ հրամայեց. և ես այսպիսի պայման դրի, որ քանի որ այս սազը (չոնգուրը) այս լարերով է զարդարված և այն չի կտրվի, ձեռք չեմ վերցնի, այն պատճառով, որ երբ ինձ վանական ձևն ձեռնադրեցին, այս լարերը ծոցումս էին մնացել և սրանք ևս ինձ հետ էին օծվել (օրհնվել), և ահա այս օծված (օրհնված) լարերով է, որ նվագում եմ սազով (չոնգուրով)։

Խոնան.— Եվ քանի որ ուխտդ պահել ևս, ողորմություն կգտնես։

Եվ այսպիսի կատակով վերջացրին նախաճաշիկը։

Սաաթլաման.— Ինչ էլ որ լինի, կփրկվեմ, որովհետև այս մեր եկեղեցին քաղասունն խորան (սեղան) ունի և եթե որ մեզանից վախճանվում է, քառասունն օր պատարագ եմ մատուցում ամենուրեք, տասը պատարագ է մատուցվում քառասուն օրում։ Եվ այսպես է ասված, որ՝ ով կտա քառասուն օրում տասը պատարագ մատուցանելու իր ննջեցյալի համար, անպայման կփրկվի, եթե վերջին օրը խոստովանվելու ու ճաշակվել է¹⁰⁸։

Հաղպատից Թիֆլիս վերադառնալուց հետո Խոնա Խելաշվիլին նորից ուղևորվում է դեպի Հայաստան, այս անգամ արդեն՝ Էջմիածին, ուր նույնիսկ միառժամանակ վայելում է Մայր Աթոռի հյուրընկալությունը։ Հարելով դեպի այն կուսակցությունը, որը դեմ էր Վրաստանի՝ Ռուսաստանին միանալուն և որի ղեկավարն էր Վրաստանից Պարսից սահմանները անցած և նրեանում

¹⁰⁷ Հետևապես, այն չէր կարող հորինված լինել 1761—1763 թթ., ինչպես ենթադրում է Մ. Հասրաթյանը («Սայաթ-Նովա», 1959, էջ 130)։

¹⁰⁸ Լ. Մ. Մելիքսեթ-Քեկ, նույն տեղում, էջ 241—249, հատկապես էջ 246—248։

(մինչև 1826 թ.) ապաստան դուրս գալուց (Հերակլ II արքայի որդի) Բագրատիոնը, Իոնա խելաշվիլին ևս անցնում է Հայաստան՝ որոնելու այնտեղ իր բախտը: Նրա՝ էջմիածնում եղած պահին այնտեղ են գալիս վրաց պալատական երեց Բորդի քահանա Շավմելիքիշվիլին սղնախցի վաճառականներին հետ միասին: Վրաց քահանան հայոց կաթողիկոսի վաղեմի ծանոթն է երևում, որը, ինչպես և Իոնան, խոսում է նրա հետ վրացերեն: Դժվար չէ կռահել, թե այս վրացախոս հայոց կաթողիկոսը ո՞վ էր: Իհարկե, ոչ այլ ոք, քան Դավիթ Ղորղանյան էնաղեթցին, որը կաթողիկոս օծվեց 1801 թ. ապրիլի 28-ին: Հետևելով, Իոնա խելաշվիլին «հյուրընկալվել է» Սասթիվամայի (Սայաթ-Նովայի) կողմից Հաղպատի վանքում 1800 թ. աշնանը և ոչ թե «էջմիածնից վերադառնալիս», ինչպես Մ. Հասրաթյանն է հայտարարում¹⁰⁹, ուրիշ խոսքով ասած՝ նախքան էջմիածին ուղևորվելը, որ տեղի է ունեցել 1801 թ. դարձանը, ոչ շուտ, քան մայիս ամիսը և ոչ ուշ, քան սեպտեմբերը, երբ հայտարարվեց Վրաստանի՝ Թուրքիայի միասնալու ցարական հրովարտակը¹¹⁰:

Թրիլիսիում XVIII—XIX դդ. միջասահմանում պատահած երկու մեծ աղետների, այն է՝ նախ 1795 թ. Աղա-Մահմադ-խանի ավերման և երկրորդ՝ 1800—1801 թթ. դաժանագույն ձմռան սառնամանիքին տեղի ունեցած սոսկալի ժանտախտի միջև ընկած տարիներին, տեր-Ստեփան անունով հայ հոգեվորականը կատարում է Հաղպատի նորոգ հանգուցյալ առաջնորդ Դավիթ վարդապետի (ասել է՝ Դավիթ արքեպիսկոպոս Թավրիզարյանի) կողոպուտի ցուցակագրությունը պետական (վրացերեն) լեզվով 3 նվազ. առաջին և երկրորդ ցուցակները՝ 1796 և 1797 թթ.՝ կահարասիքի, ամանեղենի և հաղուստեղենի և երրորդը՝ 1798 թ.՝ դրագարանի, շուրջ 41 զիրք, սրանց թվում և 4 ձեռագիր: Ցուցակները կցված են Սերոբ գրչի (Սերովրե Պատկանյանի) «Թրիլիսի աղետման պատմություն»-ը պարունակող ձեռագրին, իրեն «տապան»... Հաղպատոյ գործակալ տեր Մխիթարին, որ Աղա-Մահմադ-խանի ձեռամբ նահատակվեցավ վասն եկեղեցական արծաթի և անոթի ցուցց տալու համար», որը մտել է Վրացական ՍՍԽ ԲԱ Կ. Կեկելիձեի անվան Ձեռագրերի ինստիտուտի հայերեն ձեռագրերի հավաքածուի մեջ¹¹¹: Այս տեր-Ստեփանի գիրը (1796—1798 թթ.) և Սայաթ-Նովայի գիրը (1750—60-ական թթ.), որոնք բաժանված են մեկը մյուսից մոտ 40 տարով, այնքան նմանություն ունեն, որքան սկսնակ դրացիների անվարժ և դառամյալ ծերունու գողգոջուն ձեռքով կատարած իրար հետ¹¹²: Սրանցից առանձնապես հետաքրքիր է վերջին ցուցակը, ուր դրանցված են վրացատառ հայերենով, այն էլ Թրիլիսիի հինավուրց հայոց բարբառի առանձնահատկություններով, Հաղպատի առաջնորդանիստ եկեղեցու դրա-

109 Մ. Հասրաթյան, Սայաթ-Նովա, 1959, էջ 306—307:

110 «Կալմասուր», I, 1948, էջ 145—151 (վրացերեն): Լ. Մեղիբուկեկ, Իոնա խելաշվիլին Հայաստանում և Սայաթ-Նովան, էջ 121—135 (վրացերեն): Նույնի՝ Վրաց աղբյուրները, III, էջ 259, 262, ծան. 38:

111 Լ. Մեղիբուկեկ, «Պրովետար», 1935, N 189: Նույնի՝ Անտոն 1-ի Հակաճառությունները-հայերեն աղբյուրները, «Թրիլիսի պետական համալսարանի աշխատություններ», XXX—XXXI-B, Թրիլիսի, 1947, էջ 104—107 (վրացերեն): Նույնի՝ Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, III, 1955, էջ 182—185:

112 «Վրաց աղբյուրներ», III, էջ 186:

դարձնի տպագիր և ձեռագիր գրքերը (վերնագրերը), որոնք սերտ կապ ունեն կախ-ավանի 1766 թ. ձեռագիր ժողովածուի համար օգտագործված գրական-նություն հետ:

Նույնիսկ եթե այս ցուցակները կասկածելի համարենք և տեր-Ստեփան—Սալախ-Նովայի հետ չկապենք ու մի կողմ թողնենք, ապա «Կալմուսուրա»-ում արձանագրված Իոնա Խելաշվիլու հանդիպմանը Սաախլամա վարդապետի հետ Հաղպատի մայրավանքում, Գիորգի թագավորի օրոք, արձագանքում է երգչի որդու՝ Իվան Մեիդովի գրի առած իր հոր բանաստեղծության վերջին տան վերջին տողը, ուր ասված է. «Սալախ-Նովան գուրգևն խանիս դմաս ամբորէն, մարթալիս», այսինքն՝ «Սալախ-Նովայի մասին ասում են, որ Գուրգեն-խանի դուստր է,—ճշմարիտ է [այս]»¹¹³: Նույնը ըստ Իվանի մեկնարանության՝ «Սալախ-Նովային Գիորգի թագավորի ճորտ են անվանում,—ճշմարիտ է»¹¹⁴:

Թեյմուրազ արքայազն Բագրատիոնի (1782—1846) գրադարանի¹¹⁵ ցուցակում, որը կազմված է 1835 թ., ի միջի այլոց, նշված է. «Ուսանավորների մի ամբողջական գիրք է Սաախլամային (որին վրացիք Սավախնամա են կոչում)»¹¹⁶: Սա էր Իրակլի թագավորի օրոք, Գիորգի XIII թագավորի արքայազն եղած պահին, սեփական արքայազնին պատկանող ճորտ Գիորգի թագավորի, և նրան կից էր գտնվում, սակայն հաճախ էրելի 11-ի հետ էր, քանի որ, իրոք, լավ սաղանդար (այսինքն՝ նվագող) էր: Այլ և այլ գործիքներով (այսինքն՝ նվագարաններով) էր ածում ու երգում բանաստեղծություններն էլ ինքն էր հորինում: Էր նա սանահնեցի, Գիորգի XIII-ի արքայազնին պատկանող գյուղից՝ Վրաստանի հայերից: Հայերեն և ադրբեջաներեն (բնագրում՝ թաթուրի—Լ. Մ.—Ք.) խաղերն ու բանաստեղծությունները հորինում էր այլ և այլ առիթով: Յուրաքանչյուր դեպքին վաղել համապատասխան տաղեր սքանչելի կերպով վերածել է երգելու և զարմանալի կերպով ասել է խելացիորեն և հավուրս պատշաճի: Թեև ուսանավորները հասարակ և զոհճիկ ունեւ են հորինված, սակայն հույժ դուրեկան են»¹¹⁷:

Այս տողերը վկայում են, թե խնչպիսի ակնածանքով են վերաբերվել Սալախ-Նովային նրա կրտսեր ժամանակակիցները, որոնք համարում էին նրան սանահնեցի գյուղացի, խնչպես վերև տեսանք, լուր աջն պատճառով, որ նա Սանահնի մերձակա Այդեհատ-Իքահատ գյուղի Շահվերդյունց ընտանիքի տնօրեն էր:

Վերջապես, բերում ենք Թրիլիսի 1795 թ. սեպտեմբերի 11-ի ավերման ժամանակակից՝ Թրիլիսի վրաց կաթողիկոսանիստ մայր տաճարի ավագերեց Բզնատիոս (էղնատե) ավագ քահանա Իոսելիանու (1766—1843) վկայությունը, որ գրի է առել վերջինիս որդին՝ վրաց հայտնի պատմաբան-հնագետ և ներսիսյան դպրոցի երբեմնի ուսուցիչ¹¹⁸ Պլատոն Իոսելիանին (1810—1875):

113 Ի. Գրիշաշվիլի, էջ 98, հմտ. Մ. Հասրաթյան, էջ 118:

114 Գ. Տեր-Աստվածատրյան, էջ 110, ծան. 1:

115 Այժմ Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անվան հանրային գրադարան:

116 Այստեղ և հետագայում փակագծերում տրված ծանոթագրությունները ցուցակագրողն են:

117 «Թեյմուրազ արքայազնի գրադարանի գրացուցակը», Ս. Իորդանիշվիլու խմբագրությամբ, Թրիլիսի, 1948, էջ 40 (վրացերեն), հմտ. Ա. Нагарели, Сведения о памятниках грузинской письменности, Спб, էջ 181—187:

118 Լ. Մելիքսեթ-Քեկ, Մի էպիգրաֆ Պ. Իոսելիանու կյանքից, «Լիտերատուրուլի Սարթվելու» [Գրական վրաստան], 1938, № 31:

Ըստ Պ. Իոսելիանու՝ «Սաթնավան հայ էր, թրխիսեցի, աչքի ընկնող դեմք, հռչակավոր բանաստեղծ, մահացած 1801 թվականին, [որը] գրում էր հասարակ խոսակցական լեզվով. [էր] դիպուկ մտածելակերպի տեր, որի ասմունքներն այսօր էլ այլարանորեն կրկնում են վրացիները, միաժամանակ նա էր և խաղասաց, էր հայ, թեև հայհոյում էր հայերին. ուստի և հայերը կշտամբում էին նրան»¹¹⁹:

Այս գնահատականը ևս վկայում է այն բարձր հեղինակության մասին, որը վայելում էր Սայաթ-Նովային վրաց հասարակության աչքում:

Ինչ վերաբերում է Պ. Իոսելիանու այն խոսքերին, որ Սայաթ-Նովան իրր թե հայհոյում էր հայերին և հայերն էլ իրենց հերթին կշտամբում էին նրան, դրանք, անկասկած, արտացոլումն են այն իրողության, որ երգիչն իր խաղերից մեկում, արտասանած Հաղպատի վանքում, Իոնա Խելաշվիլու ներկայությամբ, մեղադրում էր Հաղպատի առաջնորդին, իրեն՝ հակառակ իր ցանկության հողևորական ձեռնադրելու մեջ, որից նա չխուսափեց, մինչդեռ առաջնորդը, եթե աշխատեր և ճիգ ու ջանք թափեր, գուցե փրկեր Սայաթ-Նովային անախորժ և «չուղեցած սիվ ու սուք լիրասրն» հաղցնելուց, «անմիղ տիղըն» նրան ևս «աղուի թասըն» խմեցնելուց կամ, որ նույնն է, «լիդի ընդունելուց»:

*

Մենք մեր ասածին ոչ մի եզրափակիչ ամփոփում չենք տալիս: Թող հարգելի ընթերցողն ինքը անկաշկանդ դառն և ինքը հանե իր անաչառ եզրակացությունները մեր մատուցած նյութից:

ГРУЗИНСКИЕ ИСТОЧНИКИ О САЯТ-НОВЕ

Член-корр. АН Арм. ССР Л. М. МЕЛИКСЕТ-БЕК

(Р е з ю м е)

В статье даются обзор и анализ данных об Арутине — Саят-Нове (Маджнуне)—тер-Степане, дошедших до нас в грузинских источниках (первоисточниках на грузинском языке).

Это, во-первых, сведения автобиографического характера, заключающиеся в грузинских стихах великого певца-полиглота (стихи изданы под псевдонимом «Саят-Новы» — И. Гришашвили [1918] и под псевдонимом «Маджнун» — К. Кекелидзе [1924] и автором настоящей статьи [1930]).

Во-вторых, это данные об отце и деде (со стороны матери), вкрапленные в приписках сыновей певца — Мелко и Ивана — в рукописных сборниках от 1765 г. (хранится в Литературном музее АН Армянской

¹¹⁹ Պ լ ա տ ո ն Ի ո ս ե լ ի ա ն ի, Գիորգի XIII-ի կյանքը, Ակակի Գաճերելիայի խմբագրությամբ, Թրխիսի, 1936, էջ 263 (վրացերեն):

Հանգուցյալ պրոֆ. Լ. Մ. Մելիքսետ-Բեկի հոգովածում կան մի շարք վիճելի դրույթներ, որոնց «Հանդես»-ը կանգրադառնա հետազոտում: — Խմբ.:

ССР) и 1823 г. (хранится в рукописных фондах Ленинградского отделения Института народов Азии АН СССР).

В-третьих, это свидетельства о нем же современников — царевичей Иоанна и Теймураза Багратиони и И. Иоселиани. Из этих свидетельств особенно ценно произведение Иоанна «Калмасоба», содержащее в себе описание встречи грузинского иподиакона Ионы Хелашвили с армянским вардапетом, бывшим Саатлама (Саят-Нова), в Ахпатском монастыре в царствование грузинского царя Георгия XII (XIII).

Попутно представлен опыт анализа, с одной стороны, литературно-народных источников творчества поэта и, с другой — художественных образов, созданных им в связи с любимыми им темами (Грузия, царь Ираклий, р. Кура и пр.) и вне их (Тахти-Товуз), а также отражающих разрыв поэта с грузинским царским двором и последующую ссылку его в Ках. Наконец прослеживаются некоторые выражения в грузинских стихах Саят-Новы, носящие на себе следы влияния армянского народного эпоса «Давид Сасунский» и поэмы «Витязь в тигровой шкуре» Шота Руставели.